այս լինում է այն բոլոր վարձած ֆրազներից հետո, որ պրն. Յուժակովը իր առաջին հոդվածով ժպիքել էր «ընդդեմ» դասակարգային դարոցի: Ունևորների համար՝ մեկ դարոց, չքավորների համար՝ այլ դարոց. փող ունեն՝ վճարիր ուսման համար, իսկ չեն ունենա՝ աշխատիր ուրեմն: Բայց սրանից, ինչպես մենք տեսել ենք, ունևորների համար թողնված և «այժմյան չինը», որ նակ ժողովրդական լուսավորության մի նիստեմության այժմյան միջնակարգ դարոցներում ուսման վարձը ծածկում է ծախսերի ամբողջ գումարի 28,7 % ը միայն. 40 %-ը տալիս է գանձարանը 21,8 %-ը՝ ոժանդակություններ անհատներից, հիմնարկներից ու ընկերություններից. 3 %-ը՝ կապիտալից ստացած տոկոսներ ու 6,4 %-ը՝ այլ աղբյուրներ («произв. силы», отд. XIX, էջ 35): Հետևաբար, պ. Յուժակովը այժմյանից է՛լ ավելի չե ստատիստրել միջնակարգ դարոցի դասակարգային բնույթը. նրա պլանով ունևոր մարդիկ վճարելու չեն իրենց ուսման արժեքի 28,7 % ը միայն, իսկ չքավորները՝ իրենց ուսման ամբողջ արժեքը, գումարած աշխատանքային ծառայություններն էլ վերադիր: Վատ չի՞ «նարոդ նիկական» ուսումնարան համար: Յերկրորդ՝ պլանը չեն-թագրում է, որ գիմնազիան ձանուցին բանվորներ և վարձկու—հատկապես անհող գյուղացիներից: Յերրորդ՝ թողնված է քաղաքի ու գյուղի հակադրությունը—աշխատանքի հանրային բաժանման այս հիմքը: Բանի որ պ. Յուժակովը հանրային աշխատանքի պլանաչափ կազմակերպություն է ժխտում, բանի որ նա «ուտոպիա» չի գրում՝ ուսուցումը շաղկապելով արտադրողական աշխատանքի հետ,—քաղաքի ու գյուղի այս հակադրության պահպանումը մի անհեթեթություն է, որ ցույց է տալիս, թե մեր հեղինակը գաղափար անգամ չունի այն առարկայի մասին, որ հանձն է առնում քննարկել: Այս անհեթեթության դեմ գրել են վերջ մեկն այժմյան աշակերտների «ուսուցիչները», այլ հին ուտոպիաներն էլ և նույնիսկ մեր ռուսական մեծ ուտոպիստը [23]: Պ. Յուժակովը գործ չունի գրա հետ: Զորրորդ,— և այս առանձնահատ հիմքն է, որ իրավունք է տալիս «ուտոպիան» բուրժուական անվանելու,—հանրային արտադրության պլանաչափ կազմակերպության փորձի հետ կողք-կողքի՝ տեղ է տրված և թողնված և ազատ քանքային արտադրություն էլ: Գիմնազիաներն արդյունքներ են արտադրում շուկայի համար: Հետևաբար, հանրային արտադրության դեկավարը պետք է լինեն շուկայի օրենքները, որոնց պիտի յենթարկվեն «գիմնազիաները» էլ: Պ. Յուժակովը գործ չունի դրա հետ: Յեվ վերտեղից զուր հանեցիք,—թերևս ասի նա,—որ արտադրությունը պիտի դեկավարեն շուկայի չ-որ օրենքներ: Դատարկ բան է այդ բոլորը: Արտադրությունը պիտի դեկավարեն վերջ թե շուկայի օրենքները, այլ հոգազործական գիմնազիաների պարոնայք տեսուչների կարգադրությունները: Voila tout*: Պ. Յուժակովի ուտոպիական գիմնազիաների զուտ բյուրոկրատական կազմակերպության մասին մենք արդեն խոսել ենք: Պետք է հուսալ, որ «լուսավորական ուտոպիան» ռուս ընթերցող հասարակության ոգատակար ծառայություն կմատուցի՝ ցույց տալով սրան, թե վերջան խոսն է արդի նա-

* Ահա և բոլորը: Խմբ.

դրդնիկների «դեմոկրատիզմը»։ Պ. Յուժակովի «պլանի» մեջ ճորտատիրական գիծ են հանդիսանում այն աշխատանքի ձևով կատարվող հատուցումները, որ կատարում են չքավորները ուսման վոխարեն։ Յեթե մի հետևողական բուրժուա գրեր նման նախագիծ, ապա նրա նախագծի մեջ չեյին լինի վեր առաջին ու վեր եվ յերկրորդ հարկը, և նախագիծն անչափ ավելի քարձր ու անչափ ավելի ոգտակար կլիներ քան նման նարոդնիկական ուտոպիան։ Աշխատանքի ձևով կատարվող հատուցումները ճորտատիրական կարգի տնտեսական եությունն են։ Կապիտալիստական հասարակարգում չքավոր մարդը պետք և վաճառի իր քանվորական ուժը, վորպեսզի կենսամիջոցներ գնի։ Ճորտատիրական հասարակակարգում չքավորը պետք և աշխատանքի ձևով կատարվող հատուցումներ անի այն կենսամիջոցների փոխարեն, վոր նա ստացել և կալվածատերից։ Աշխատանքի ձևով կատարվող հատուցումները (կոռը) անհրաժեշտաբար պահանջում են, վոր կռռվորը հարկադրանքով աշխատի, անիրավահավասար լինի, պահանջում են այն, վոր «կապիտալի» հղինական անվանել և «auseroekonomischer Zwang» (III, 2,234)**։ Ուստի և Ռուսաստանում, վորչափով պահպանվել են կռռային աշխատանքները, սրանց անհրաժեշտ լրացում են հանդիսանում դյուղացու քաղաքացիական անիրավահավասարությունը, հողին ամրացնելը, մարմնական պատիժները, ուրիշի մոտ աշխատել ստիպելու իրավունքը։ Պ. Յուժակովը չի ըմբռնում կռռային աշխատանքների ու անիրավահավասարության մեջև յեղած այս կապը, սակայն «գործնական» մարդու հոտառությունը թելադրել է նրան, վոր վատ չեր լինի, յեթե գիմնազիստների կռռային աշխատանքների հետ մեկտեղ՝ ուղղիչ գիմնազիստներ հիմնվեյին նրանց համար, վորոնք կհանդղնեյին խուսափել լուսավորությունից, վոր մեծահասակ գիմնազիստ բանվորները պետք է մնան յերեխա աշակերտների վիճակում։

Յես հարց է ծագում, թե մեր ուտոպիստի ինչքն են պետք յեղել իր ստեղծագործության առաջին յերեք հարկերը։ Կթողներ մենակ չորքորդ հարկը, և այն ժամանակ վեր վոր չեր կարող վեր մի բան առարկել, վորովհետև մարդն ինքը գլխից ուղղակի ասել է, վոր «ուտոպիա» յե գրում։ Սակայն հենց այստեղ է ահա, վոր նա kleinbürger-ական եությունը պրչ և խաղացրել։ Մի կողմից՝ «ուտոպիան» էլ լավ բան է, իսկ մյուս կողմից՝ պարոն ինտելիգենցիայի գաստավական հոնորարներն էլ վատ բան չեն։ Մի կողմից՝ ուսում «առանց ժողովրդի կողմից վորևե ծախս անելու», իսկ մյուս կողմից՝ չե, ախպերացու, տոկոսիկներն ու շինչգումն ամբողջովին վճարիր, հետո, մի քիչ էլ կոռ քաշիր յերեք տարի։ Մի կողմից՝ փքուն ճառաբանություններ դասակարգային բաժանման վտանգավոր ու վնասակար լինելու մասին, իսկ մյուս կողմից՝ գուտ դասակարգային «ուտոպիա»։ Հենց ու նորի մեջև կատարվող այս հավիտենական տատանումները, իր սեփական գլխից վեր ցատկելու, այսինքն՝ բոլոր դասակարգերից բարձր կանգնելու այս կուրյող հավակնություններն են հենց կազմում ամեն մի kleinbürger-ական աշխարհայեցողության եությունը։

** Արտատնտեսական հարկադրանք։ Խմբ.

«ՁԱԽՈՒՔՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒՔՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻԶՄՈՒՄ» ՀՈԴՎԱԾԻՑ

Կապիտալիզմն անխուսափելի կերպով սոցիալիզմին ժառանգություն է թողնում մի կողմից՝ հին, դարերով ձևավորված պրոֆեսիոնալ և արհեստավորական տարբերություններ բանվորների մեջ, մյուս կողմից՝ այնպիսի պրոֆմիություններ, որոնք միայն չափազանց դանդաղ, յերկար տարիների ընթացքում կարող են զարգանալ և կզարգանան ու կդառնան ավելի լայն, պակաս չափով ցեխային, արտադրական միություններ, (որոնք ընդգրկում են ամբողջ արտադրություններ, այլ ոչ միայն ցեխեր, արհեստներ, պրոֆեսիաներ), և ապա՝ այդ արտադրական միությունների միջոցով կանցնեն մարդկանց մեջ աշխատանքի բաժանումը վերացնելուն, դաստիարակելու, ուսուցանելու ու պատրաստելու համակողմանի զարգացած և համակողմանի պատրաստված մարդիկ, որոնք կարող են ամեն բան անել։

1920 թ. ապրիլ—մայիս

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԱՍԻՆ

1. Ներկա մոմենտում, ՌՍՖՍՀ ռազմական հաղթությունների և առհասարակ նրա միջազգային դրության առնչությամբ, արտադրական պրոպագանդը պետք է նորից առաջին պլանը քաշվի, ուժեղացվի և կազմակերպչորեն ամրացվի։

2. «Известия» և «Правда» դեկավար լրագրերն առաջին հերթին պետք է՝ ա) կրճատեն քաղաքականության հատկացվող տեղը, ուժացնեն արտադրական պրոպագանդի բաժինը. բ) ազդեն կուսակցության և խորհրդային հիմնարկների վրա՝ արտադրական պրոպագանդին ավելի ուժ տալու իմաստով. 3) սիստեմատիկ կերպով աշխատեն, արտադրական պրոպագանդի գործը կազմակերպել հատկապես մասնագիտական մասշտաբով, մշակեն լայն միջոցառումներ նրա զարգացման, բարելավման և հատկապես նրա իրական, գործնականում իրականացվող հաջողությունները ստուգելու համար։

3. Նույն ձևով պետք է սիստեմավորվի, ընդարձակվի ու զարգացվի բանվորական և գյուղացիական մասսաների միջից ընդունակ մարդկանց պիշնիր ու դյուտարարներ առաջ քաշելու գործը։

4. Վողջ ՌՍՖՍՀ-ում արտադրական պրոպագանդը պետք է կենտրոնացվի մի մարմնի դեկավարության տակ՝ ուժեր անտեսելու և աշխատանքն ավելի ճիշտ ուղղությամբ տանելու նպատակով։ Դրա հետ միաժամանակ բացարձակապես անհրաժեշտ է ամենալայն ինքնագործունեություն՝ տեղական և պրոֆեսիոնալ։ Ցուրաքանչյուր նշանակալից հաջողության սիստեմատիկ, կանոնավոր կազմակերպված մարքսատրություն, նատուրալ պրեմիաներ և այլն, հաջողությունների անտեսում և կոմպետենտ ստուգում։

5. Արտադրական պրոպագանդի միասնական դեկավար օրգանը պետք է լինի հանրամատչելի, 1/2–1 միլիոն տիրաժ ունեցող մասսայական լրագրի խմբագրություն։

Այդպիսի լրագիր «Беднота»-ն պիտի դառնա։

Այդ տիպի ալդյունարարական և գյուղատնտեսական լրագրերի բաժանումը վնասակար է, որովհետև

սոցիալիզմի նպատակն է մոտեցնել ու միացնել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։

Իսկ գործնականում արդյունաբերական պրոլետարիատի դեկավար դերը և՛ քաղաքում, և՛ գյուղում, և՛ մասնավորապես հողագործության ուրբանիզացիայի, վողջ յերկրի էլեկտրիֆիկացիայի գործում—պահանջում է հենց միասնական արտադրական լրագիրը (և արտադրական պրոպագանդի միասնական դեկավարություն) և՛ քանվորների, և՛ գյուղացիների համար։

6. Դեկավարող կոլեգիան պետք է բաղկացած լինի 5 հոգուց. 1) Պրոֆմիությունների Համամիութենական Կենտրոնական Խորհրդից, 2) Ժողտնտերխորհրդից, 3) Հողժողկոմատից, 4) Բաղլուսպլեվարից, 5) Ռկկկ-ից (կամ պատասխանատու խմբագիր)։ Կոլեգիան և լրագիրը պետք է լինեն պրոֆմիությունների Կենտխորհրդին կից (դուրս մի հոգի յել ավելացվի Արհլուս դլխավարչությունից)։

7. Արտադրական լրագիրը պետք է լինի պոպուլյար՝ մինիմումավոր մասսաներին մատչելի լինելու իմաստով, քայց վոչ մի դեպքում պարզեցումը դեհնկացման չպետի հասցնի։ Չպետք է իջնի անզարգացած ընթերցողի մակարդակին, այլ անշեղորեն,—չափազանց գուշակավոր աստիճանականությամբ,— պետք է բարձրացնի այդ ընթերցողի զարգացումը։ Քաղաքականությանը հատկացնել փոքր, օրինակ՝ 1/4 տեղ։ Գլխավոր տեղը հատկացնել միասնական տնտեսական պլանին, աշխատանքի ֆրոնտին, արտադրական պրոպագանդին, քանվորներին ու գյուղացիներին կառավարել սոցրեցնելուն, խորհրդային հիմնարկների ու տնտեսությունների օրենքների ու միջոցառումների իրական

կատարման ստուգմանը, մասսայական—ընթերցողի հետ լայն և կանոնավոր մտքի փոխանակելուն։

8. Լրագրում տպագրվող լրագրին ուղարկվող, ինչպես և այլ մատերիալները պետք է բրոշյուրներով և թերթիկներով սիստեմատիկաբար վերահրատարակվեն, վորպեսզի դրանցով պարբերաբար պարատիր կերպով մատակարարվեն գրադարանները, ապա բոլոր գործարանները և տվյալ արտադրության ձեռնարկությունները (բրոշյուրները և թերթիկները մատերիալը պետք է սիստեմավորեն ըստ արտադրության։ Գրադրքերի և արտասահմանյան տեխնիկայի տեսությունների հետ միասին այդ մատերիալը պետք է ծառայի պրոֆեսիոնալ-տեխնիկական և պոլիտեխնիկական կրթության տարածելու համար։

Մասնավորապես՝ լրագրերի, ինչպես նաև արտադրական բրոշյուրների և թերթիկների ավելի կանոնավոր բաշխումը ՌՍՖՍՀ գրադարաններին՝ պետք է հատուկ ուշադրության առարկա դառնա։

9. Անհրաժեշտ է ինժեներներին, գյուղատնտեսներին, ուսուցիչներին, ապա վորոշ վորակավորում ունեցող խորհրդային ծառայողներին ներգրավել արտադրական պրոպագանդին մասնակցելու գործի մեջ (անդրագիտության վերացման հետ կապված)։

Դասախոսությունների, գրույցների, հաշվետվությունների և այլն կազմակերպում։

Գարատրել բոլոր կարող ուժերին՝ բնակչության ծանոթացնել էլեկտրիֆիկացիային, թեյլորիզացիային (աշխատանքի ռացիոնալիզացիա. կազմ.) և այլն։

10. Արտադրական պրոպագանդի համար ֆիլմերի ավելի լայն և սիստեմատիկ ոգտագործում։ Միասեղ

աշխատանք կինոթատրոնի հետ: Խորհրդային պատկա-
կա (գրամաֆոն): Ակումբներում, խրճիթ ընթերցա-
րաններում, փողոցներում և այլն դիպրամաների և
կարտոգրաֆների ցուցադրում: Դործարանների, աբ-
հետանոցների, տեխնիկական դպրոցների մոտ փակ-
ցնել ափիշներ և պլակատներ:

11. Աշխոդկոմատի և այլ հիմնարկների հետ միա-
սին կազմակերպել արտադրական տեսչություն: Նրա,
ինչպես և հրահանգիչների, հրահանգչական գնացքնե-
րի, շոգենավերի և այլն աշխատանքները համաձայ-
նեցնել արտադրական պրոպագանդի աշխատանքի
հետ:

12. Որինակելի ձեռնարկությունների առանձնա-
նում, այդ ձեռնարկություններին լայն ակնկալ: Ար-
դյունաբերական աշխատանքի արտադրականության փորձ
ունեցող բանվորների կազմակերպում հատուկ արհես-
տանոցներում կամ ոչ այնտեղում՝ տուն բջիջներում և
այլն: Դրանց ազատագործել հետամնացներին սովորց-
նելու, պրոֆտեխնիկական և պոլիտեխնիկական կըր-
թություն տարածելու համար և այլն:

18/IX 20 թ. (Ծերկերի ժողովածվի 2-րդ հատորից):

* * *

VI

«Աշխատանքի դպրոցի գաղափարի մեջ մուտ են գոր-
ծել մանր-բուրժուական, տոլստոյական գաղափարներ՝
հակառակ մեզ»... (ընդգծումները Լենինի են):

Նույն տեղում, միքիչ հետո Լենինը նշանակում է.
«Կապը արտադրողական աշխատանքի հետ»... հետո
ավելացնում է փակագծի մեջ «և՛ մանր բուրժուական
արհեստագիտական գպրոցից». նույն նշանակումները

մեջ Լենինը գրում է. պոլիտեխնիկական սկզբունքը
«չի պահանջում ամեն բան սովորեցնել. այլ պահան-
ջում է սովորեցնել ժամանակակից ինդուստրիայի
հիմունքներն ընդհանրապես»:

(Լենինի Համառոտ. կ.գ.կ. 7-րդ հրավիր-
ման III տեսչային Խորհրդակցման
ժամանակ արած զրավոր դիտողություններից,
1920 թ. տետր. 26—27:

Այդ նշումները վերցված են ընկ. Բուբնո-
վի ճառից «պոլիտեխ. դպրոցի վերակառուցման
և ժանկավարժության մեջ եղած աղավաղումնե-
րի մասին»):

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ուրատատանի Ցերիտատարդության Կոմունիստական Միության Համմռուատական III Համագումարում 1920 թվի նոյեմբերի 4-ին արտասանած ճառից)

Ընկերներ, ես այսօր կկամենայի խոսել այն նյու-
թի մասին, թե ովքե՞ր են Կոմունիստական Ցերիտա-
տարդության Միության հիմնական խնդիրները և թե
այս հետ կապ ունենալով՝ յերիտատարդության կա-
զմակերպություններն ինչպիսի կազմակերպություն
պիտի լինեն սոցիալիստական հանրապետության մեջ
ընդհանրապես:

Այս հարցի վրա պետք է կանգ առնել մանավանդ
նրա համար, որ մորոշ իմաստով կարելի չի ասել, թե
հենց յերիտատարդության և վիճակված կոմունիստա-
կան հասարակության ստեղծելու իսկական խնդիրը:
Քանզի հետևապես, որ կապիտալիստական հասա-

քակութեան մեջ զաստիարակված զործիչների սերունդը լավագույն դեպքում կարող է լուծել շահագործման վրա կառուցված հին կապիտալիստական կենցաղի հիմքերը վոչնչացնելու խնդիրը։ Այս հին սերունդը լավագույն դեպքում կկարողանա լուծել այնպիսի հասարակակարգ ստեղծելու խնդիրը, վորն ոգներ պրոլետարիատին ու աշխատավոր զասակարգին՝ իրենց ձեռքում պահելու իշխանութիւնը և ամուր պատվանդան ստեղծելու, վորի վրա կարող է կառուցել միայն այն սերունդը, վորն աշխատանքի մեջ կզգա արդեն նոր պայմաններում, այնպիսի պարագաներում, երբ շահագործման հարաբերութիւնները չկան մարդկանց մեջ։

Ցեղ ահա այս տեսակետից մոտենալով կերիտասարդութեան խնդիրների հարցին, կես պետք է ասեմ, վոր ընդհանրապես կերիտասարդութեան ու մասնավորապես կոմունիստական Ցերիտասարդութեան Միութիւնների ու ամեն տեսակի այլ կազմակերպութիւնների այս խնդիրները կարելի կ՚արտահայտել մի բառով՝ սովորելն է խնդիրը։ Հասկանալի կ՚, վոր այս «մի բառ է» միայն։ Այս բառը դեռ պատասխան չէ տալիս գլխավոր ու ամենից հետևան հարցերին, թե ինչ պետք է սովորել ու ինչպես պետք է սովորել։ Իսկ այստեղ ամբողջ խնդիրն այն է, վոր այն ժամանակները փոխակերպվել է հին, կապիտալիստական հասարակութիւնը, այլևս հինը ինքնին չեն կարող ուսուցիչ, կրթութիւնն ու դաստիարակութիւնը նոր սերունդների, վորոնք պետք է կոմունիստական հասարակութիւն ստեղծեն։ Ցերիտասարդութեան ուսուցիչ, կրթութիւնն ու դաստիարակութիւնը պետք է հետևեն

ուշենան այն հետքը, վոր մեզ ժառանգութիւն է թողել հին հասարակութիւնը։

Մենք կարող ենք կոմունիզմ կառուցել գիտելիքների, կազմակերպութիւնների ու հիմնարկների այն զուժերից, մարդկային ուժերի ու միջոցների այն պատրաստի մասից, վոր մեզ ձեռք է հին հասարակութիւնից։ Ցերիտասարդութեան ուժերն, կազմակերպման ու կրթութեան զոյն արմատական ձևափոխելով միայն մենք կկարողանանք հասնել այն բանին, վոր կերիտասարդ սերնդի ջանքերի հետևանքը լինի այնպիսի մի հասարակութիւն ստեղծելը, վոր նման չլինի հնին, այլ ինքնը կոմունիստական հասարակութիւն ստեղծելը։

Այս պատճառով հարկավոր է, վոր մենք մանրամասնորեն կանգ առնենք այն հարցի վրա, թե մենք ինչ պիտի սովորենք, և ինչ պետք է սովորի կերիտասարդութիւնը, կեր՚ն նա իսկապես կամենում է կոմունիստական կերիտասարդութեան կոչումն արդարացնել, և ինչպես պիտի է այս կերիտասարդութիւնը նախապատրաստենք այն բանին, վոր կարողանա կատարել ու ավարտել այն, ինչ վոր սկսել ենք մենք։

Ցես պետք է ասեմ, վոր ըստ կերևույթին առաջին ու ամենահետևական պատասխանն այն կլիներ, թե Ցերիտասարդութեան Միութիւնն ու ընդհանրապես ամբողջ կերիտասարդութիւնը, վոր կամենում է կոմունիզմին հասնել, պետք է կոմունիզմ սովորի։

Սակայն «կոմունիզմ սովորելու» այս պատասխանը չափազանց ընդհանուր պատասխան է։ Իսկ մեզ ինչ է հարկավոր կոմունիզմ սովորելու համար։ Ընդհանուր

գիտելիքների գումարից մենք ինչ պետք է անջատենք, որ կոմունիզմի գիտելիք ձեռք բերենք։ Այս կետում մեզ մի շարք վտանգներ են սպառնում, որոնք ամեն քայլափոխում կարևան են պատիս, հետց որ կոմունիզմ սովորելու խնդիրը սկսել և դրվում կամ լուծը այս խնդիրը չափազանց միակողմանի կամ հասկացվում։

Բնական է, որ առաջին հայացքից մարդու միտքն այն է գալիս, թե կոմունիզմ սովորել նշանակում է յուրացնել գիտելիքների այն գումարը, որ շարադրված է կոմունիստական ձեռնարկներում, բրոշյուրների ու աշխատությունների մեջ։ Սակայն կոմունիզմ սովորելու այս ամենակ վորոշումը չափազանց լիրտ ու թերի կլիներ։

Ցեթե կոմունիզմ սովորելը կոմունիստական աշխատությունների, դրքույկների ու բրոշյուրների մեջ շարադրվածը յուրացնելը լիներ միայն, ապա այդ ժամանակ մենք հեշտությամբ կարող էինք ունենալ կոմունիստական պալիներ կամ պարծենկոտներ, իսկ այս ամեն քայլափոխում մեզ կվնասեր, որովհետև բանից դուրս կգար, որ այս մարդիկ սովորելով ու կարդալով այն, ինչ շարադրված է կոմունիստական գրքերում ու բրոշյուրներում, չեն կարող այս բոլոր գիտելիքները շաղկապել և չեն կարող գործել այնպես, ինչպես որ կոմունիզմն է պահանջում իրոք։

Ամենամեծ չարիքներից ու թշվառություններից մեկը, որ մենք ժառանգություն ենք ստացել հին, կապիտալիստական հասարակությունից, այն է, որ լինելով խզված և գրքի ու կյանքի պրակտիկայի կապը, որովհետև մենք այնպիսի գրքեր ունեցինք, որտեղ

ամեն ինչ լավագույն կերպարանքով էր նկարագրված, և այս գրքերը մեծ մասամբ ամենաղզվելի ու կեղծավոր առաքյան էին, մի առաքյան, որով կապիտալիստական հասարակությունը մեզ ներկայացնում էր կեղծ կերպարանքով։ Ուստի և վերին աստիճանի սխալ կլիներ սոսկ գրքով յուրացնել այն, ինչ վոր ասված է գրքերում կոմունիզմի մասին։

Այժմ մեր ճառերի ու հոդվածների մեջ այն սոսկ կրկնաբերյանը չկա, ինչ վոր առաջ ասում էինք կոմունիզմի մասին, վորովհետև մեր ճառերն ու հոդվածները կապ ունեն ամենօրյա ու հանրակոմանի աշխատանքների հետ։

Առանց աշխատանքի, առանց կռվի, կոմունիստական բրոշյուրներից ու աշխատություններից քաղված կոմունիզմի մասին գրքով ձեռք բերած ծանոթությունն անարժեք բան է մնանգամայն, վորովհետև այս դեպքում կշարունակվեր թեորիայի ու պրակտիկայի հին խզումը, վորը հին բուրժուական հասարակության ամենազզվելի գիծն էր։

Ե՛լ ավելի վտանգավոր կլիներ, եթե մենք սկսեինք յուրացնել կոմունիստական լոզունգները միայն։ Ցեթե մենք այս վտանգը ժամանակին չկոչնենք և եթե մեր ամբողջ աշխատանքը չուղղենք այս վտանգը վերացնելու կողմը, ապա այդ ժամանակ գոյություն կունենա միլիոն կամ մեկ միլիոն մարդկանց, կոմունիստական ուսուցչության հետո քրենց կոմունիստներ կանվանեն, միայն մեծ վնաս կհասցնեն կոմունիզմի գործին։

Այստեղ մեր հանդիպ ծառանում է այն հարցը, թե մենք ինչպես պետք է այս բոլորը շաղկապենք կո-

մանիզմի ուսուցման համար։ Մենք ինչ պետք է վերցնենք հին դպրոցից, հին պիոներությունից։

Հին դպրոցը հայտարարում էր, թե կամենում է հանրակրթական գործողացած մարդ պատրաստել, թե նպատակ է հետապնդում ընդհանրապես։ Մենք գիտենք, որ ոչ ոք ոչ ոտիկը կկոչնիք է այս, որովհետև ամբողջ հասարակությունը հիմնված է և հանդես էր գալիս այն բանի վրա, որ մարդիկ բաժանված են դասակարգերի, շահագործողների ու ճնշվածների։ Բնական է, որ ամբողջ հին դպրոցը լիովին ստորված լինելով դասակարգային զգացողությունից էր առնում սնունդ իր բուրժուազիայի ծառայության համար։ Հին դպրոցի ընդհանուր խնդիրը հարմարեցված էր բուրժուազիայի շահերին։

Այդ դպրոցներում բանվորների ու գյուղացիների հին սերունդը մինչ այնքան կրթում էին, որքան ընտելացնում էին ծառայելու նրան բուրժուազիայի շահերին։ Նրանց այնպես էին դաստիարակում, որ բուրժուազիայի համար պիտանի ստրուկներ պատրաստեն, որոնք ընդունակ լինեին վաստակ տալու նրան և մինչև ժամանակ չվերդվեին նրա հանդեպ ունեցած պարտությունը։ Ուստի և հին դպրոցը մխիթարում էր նրանց, որ ժամանակ կգա, երբ նրանց վերցնելու կոչ են անելու, քանի որ հարկավոր են, որպեսզի հասնեն իսկական կոմունիստական կրթության։

Այսօր մենք ստիպված ենք հին դպրոցի հասցեին ուղղված այն պարսավանքներին, այն մեղադրանքներին, որ շարունակ ասվել են նրա մասին, որովհետև տակավին մնում են միանգամայն սխալ մեկնաբանություններ։

Ասում են, թե հին դպրոցը սերտելու դպրոց էր, մեքենական վարժություններով դպրոց էր, անդիմադրելու դպրոց։ Այս ճիշտ է, սակայն պետք է կարողանալ տարբերել, թե հին դպրոցում ինչ էր վատ ու ինչ էր օգտակար մեզ համար, պետք է կարողանալ հին դպրոցից ընտրել այն, որ անհրաժեշտ է կոմունիզմի համար։

Հին դպրոցը սերտելու դպրոց էր, նա մարդկանց հարկադրում էր բազմաթիվ անպետք, ավելորդ, միայն պիոներներ յուրացնելու, որոնք խանգարում էին գլուխը և չերտատարդ սերունդը դարձնում ընդհանուր շարանի մեջ սեղմված չինովնիկներ։ Սակայն դուք անպիտան սերտած կլիներ, եթե փորձեք արգելել այն չեղրակացությունը հանել թե կարելի է կոմունիստ դառնալ առանց յուրացնելու այն, ինչ ամբարել և մարդկային գիտությունը։ Սխալ կլիներ այնպես մտածել, թե բավական է կոմունիստական լոզունգները, կոմունիստական գիտության չեղրակացությունները յուրացնել՝ առանց յուրացնելու գիտությունների այն գումարը, որոնց հետևանք և ընդգծ կոմունիզմը։

Թե մարդկային գիտելիքների գումարից ինչպես առաջ չիկով կոմունիզմը, սրա համար երբեմն օրինակ մարքսիզմը։

Դուք կարդացել և լսել եք, թե ինչպես կոմունիստական թեորիան, կոմունիստական գիտությունը գլխավորապես Մարքսն և սահմանել, թե ինչպես մարքսիզմի այս ուսմունքը դարձրեց մեկ մարդու աշխատանք լինելուց, մինչև այս մարդը 19-րդ դարի հանճարեղ սոցիալիստն եր, թե ինչպես այս ուսմունքը

դարձավ ամբողջ աշխարհի միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր պրոլետարների ուսմունք, մոքանք այս ուսմունքը կիրառում են կապիտալիզմի դեմ մղված իրենց կռվում։

Ցնծի չեթե դուք հրապարակ բերնք այսպիսի մի հարց, թե ինչու Մարքսի ուսմունքը կարողացավ տիրել ամենահեղափոխական դասակարգի միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր սրտերին, — դուք կարող եք ստանալ մեկ պատասխան. այս անգի ունեցավ այն պատճառով, որ Մարքսը հենվում էր մարդկային դիտողությունների ամբողջ պատվանդանին, դիտողություններ, որոնք ձեռք էին բերված կապիտալիզմի ժամանակ, և որոնք ուսումնասիրել էին մարդկային հասարակության զարգացման օրենքները այս տեղի ունենալ այն պատճառով, որ Մարքսն ըմբռնեց անհրաժեշտությունը կապիտալիզմի զարգացման, որ տանում է դեպի կոմունիզմ, և, որ գլխավորն է, նա այս ապացուցեց այն բանով միայն, որ հիմնվեց այս կապիտալիստական հասարակության ամենաճիշտ, ամենամանրամասն, ամենախոր ուսումնասիրության վրա, ապացուցեց՝ լիովին յուրացնելով այն բոլորը, որ տվել էր նախկին գիտությունը։

Այն բոլորը, ինչ ստեղծել էր մարդկային հասարակությունը, նա ուսումնասիրեց և մտքից քննադատեցին՝ չթողնելով մի կետ առանց ուշադրության։ Այն բոլորը, ինչ սահմանել էր մարդկային միտքը, նա վերամշակեց, քննադատության չենթարկեց, բանվորական շարժումով ստուգեց և արեց այն եզրակացությունները, որ բուրժուական շրջանակներով սահմանափակված կամ բուրժուական նախապաշարումներով հաշիանդված մարդիկ չէին կարողացել անել։

Այս պետք է նկատի ունենալ, երբ մենք, որպեսզի պրոլետարական հեղափոխության մասին։ Առանց տարր ըմբռնելու, թե միայն ճիշտ ճանաչելով այն կուլտուրան, որ ստեղծել է մարդկության ամբողջ զարգացումը, թե այս կուլտուրան վերաշխատելով միայն կարելի է պրոլետարական կուլտուրա հասկանալ, —առանց այսպիսի ըմբռնման՝ մենք չենք կարող այս խնդիրը լուծել։

Պրոլետարական կուլտուրան մի անհայտ տեղից դուրս ցրծած, վայր ընկած բան չէ, պրոլետարական կուլտուրան այն մարդկանց մտքի հնարանքը չէ, որոնք իրենց անվանում են պրոլետարական կուլտուրայի մասնագետներ։ Այս բոլորը գնդաբանություն է տեղն ու տեղը։ Պրոլետարական կուլտուրան պետք է որինաչափ զարգացումը լինի այն գիտությանց, որ մարդկությունն արտադրել է կապիտալիստական հասարակության, կալվածատիրական հասարակության, չինովնիկական հասարակության ճնշման ներքո։

Այս բոլոր ուղիներն ու ճամփաները ժառեցրել են ու մռայլացնում են և շարունակում են մռայլացնել պրոլետարական կուլտուրային նույն կերպ, ինչպես Մարքսի վերամշակած քաղաքատնտեսությունը դուրս ավեց մեզ, թե ինչ բանի պետք է հասնի մարդկային հասարակությունը, մասնավորապես, թե պետք է դասակարգային կռվի անցնել պրոլետարական հեղափոխության սկսել։

Ձերը չերիտասարդության ներկայացուցիչների շարքերում ու նոր կրթության միջանի պաշտպանների

դևոցպլենան բանվորների ու գյուղացիների, որոնք հին հասարակության նկատմամբ ունեցած տեսությանը միացնում են այս կամքի համար չեզած ուժերը շաղկապելու և կազմակերպելու վճռականությունը, կարողությունն ու պատրաստակամությունը, որպեսզի միլիոնավոր ու հարյուր-միլիոնավոր կամքերից որոնք անջատված, բաժան-բաժան ուրած և ցիրուցան են չեզած վիթխարի չերկրի սահմանների մեջ, ստեղծեն մեծագյալ կամք, որովհետև առանց այս մեծագյալ կամքի մենք անխուսափելիորեն կջախջախվենք։ Առանց այս միացության, առանց բանվորների ու գյուղացիների այս պետականական դիկտատուրայի՝ մեր գործն անհնարին չեր։ Առանց սրա մենք չենք կարողանա հաղթել ամբողջ աշխարհի կապիտալիստներին ու կալվածատերերին։ Մենք չենք ամրապրել նոր չնչի հիմքը, ոչ միայն որ այս հիմքի վրա կոմունիստական նոր հասարակություն կառուցենք։

Նմանապես և հին դպրոցը ժխանելով, այս հին դպրոցի նկատմամբ մեր անզիջական ու անհրաժեշտ տեսությունն տալով, հին դպրոցը խորտակելու պատրաստակամությունը դնահատելով՝ մենք պետք է ըմբռնենք, որ հին սերունդ, հին անցքը անելու, հին մեքենական վարժության տեղը մենք պետք է դնենք ժամանակին գիտակցության ամբողջ գումարը մեզ համար վերացնելու և այնպես վերացնելու կարողությունը, որ կոմունիզմը մեզնում չլինի մի այնպիսի բան, որ բիրան է արված, այլ մի բան, որին դուք կնկատեք հասած լինենք մեր մտածողության, և կոմունիզմը լինի դաժան պայմանների չեզրակացությունների, որոնք անխուսափելի չեն սրդի կրթության տեսակետից։

Մենք ինչպես պետք է գնանք հիմնական խնդրերը, որը խոսում ենք կոմունիզմ սովորելու խնդրի մասին։

Ինչ մի դործնական օրինակ կպերցնեմ այս խնդիրը ձեզ պարզելու, այլև մեծամասնակ մոտենալու համար այն հարցին, թե ինչպես պետք է սովորել։ Դուք բոլորդ գիտեք, որ դեմոկրատական խնդիրներից հետո, հանրապետության պաշտպանության խնդիրներից անմիջապես հետո, այժմ մեր հանդեպ ծառանում է տնտեսական խնդիրը։

Մենք գիտենք, որ չի կարելի կոմունիստական հասարակություն կառուցել, եթե չվիրականացնենք արդյունաբերության ու հողագործության, քանի որում պետք է վերջիններս վերակառուցել հնից տարբեր ձևով։ Հարկավոր է վերակառուցել՝ ժամանակակից գիտության վերջին խոսքի համաձայն կառուցված հիմքի վրա դնելով։ Դուք գիտեք, որ այսպիսի հիմք նկատի ունենք էլեկտրականությունն է, որ այն ժամանակ մեզ, երբ ամբողջ երկրի արդյունաբերության ու հողագործության բոլոր ճյուղերի էլեկտրիֆիկացիան պլուս մեծ, մենք այս խնդիրը կլուծացնենք, այն ժամանակ մեզ դուք կկարողանաք այն կոմունիստական հասարակությունը կերտել ձեզ համար, որ չի կարողանա կառուցել հին սերունդը։

Քեր հանդեպ կանգնած է ամբողջ երկրի անհետաձգելի վերածնության խնդիրը, թե հողագործության ու թե արդյունաբերության սրդի անխնդիկական հիմքի վրա վերակազմելու, վերականգնելու խնդիրը, մի հիմք, որ դրված է սրդի գիտության, տեխնիկայի, էլեկտրականության վրա։

Դուք շատ լավ հասկանում եք, որ անգրագետ մարդին էլեկտրիֆիկացիայի գործին հաբար չեն դնի, և այս դեպքում ոչ պրագիտությունը դեռ բավական չէ հասկանալ, թե ինչ է էլեկտրականությունը. պետք է իմանալ, թե տեխնիկապես ինչպես պետք է կիրառել էլեկտրականությունը թե արդյունաբերության, թե հողագործության նկատմամբ և թե արդյունաբերության ու հողագործության առանձին ճյուղերի վերաբերմամբ։ Պետք է մարդին բերենք այս սովորին, հաբկավոր և ամբողջ հասունացող աշխատավոր սերնդին սովորցնել այս։ Այս բանը մենք պետք է սովորենք, այդ բանը պիտի սովորեցնել աշխատավորների հասունացող ամբողջ սերնդին։

Ահա այն խնդիրը, որ ծառանում է ամեն մի պետականից կոմունիստի առաջ, ամեն մի կուլտուրական առաջ, որն իրեն կոմունիստ և հայտարարում է իրեն պարզ հաշիվ է տալիս, թե ինչը Ռուսիայի կոմունիստական Միության մեջ մանավանդ հանձն է առել այն խնդիրը, որ ոչնչի կուսակցությունը կոմունիզմ կառուցելու և ոչնչի ամբողջ կուլտուրական սերնդին կոմունիստական հասարակություն ստեղծելու։ Նա պետք է հասկանա, որ ինքն այս կարող է ստեղծել արդի կրթության վրա հիմնվելով միայն, և եթե նա չունենա այս կրթությունը, կոմունիզմը կմնա լոկ ցանկություն։

Նախկին սերնդի խնդիրն էր բուրժուազիային տապալել։ Այն ժամանակ դյուրավոր խնդիրն էր բուրժուազիային քննադատել, մասսաների մեջ զրկել բուրժուազիան տնտեսություն ստանալու գաղափարական դիրակցությունն զարգացնել, իր ուժերը համախմբել կարողանալ։

Նոր սերնդի առաջ ավելի բարդ խնդիրը և կանգնած։ Դուք գիտեք այն, որ դուք միացնեք ձեր բոլոր ուժերը, որպեսզի կապիտալիստների հարձակման դեմ պաշտպանեք բանվորա-գյուղացիական իշխանությունը։ Դուք այս պետք է անեք։ Դուք շատ լավ հասկացել եք այս. կոմունիստը պարտ պատկերացնում է այս խնդիրը։ Սակայն այս բավական չէ։

Դուք պետք է կոմունիստական հասարակություն կառուցեք։ Աշխատանքի առաջին հետ շատ սեռակից տարբած է։ Հինը խորտակված է, ինչպես և հենց պետք էր խորտակել այն։ Հինը ավերակների մի կույտ է ներկայացնում, ինչպես և հենց պետք էր ավերակների կույտի վերածել այն։ Հողը մաքրված է, և հողի վրա կոմունիստական յերիտասարդ սերունդը պետք է կառուցի կոմունիստական հասարակություն։

Ձեր հանդեպ կանգնած է շինարարության խնդիրը, և դուք այս կարող էք լուծել միայն նրանով, որ տիրեք ամբողջ ժամանակակից գիտությանը, կարողանաք կոմունիզմը պատրաստի, անդիք արած բանաձևերից, խորհրդներից, դեղատոմսերից, կարգադրություններից, ծրագրերից դարձնել այն կենդանի յերևույթը, որը միացնում է ձեր անմիջական աշխատանքը և կոմունիզմը դարձնում դեկավար ճառնարկ ձեր գործնական աշխատանքի համար։

Ահա ձեր խնդիրը, որով դուք պետք է դեկավարվեք ամբողջ յերիտասարդ սերունդը կրթելու, պատրաստելու, բարձրացնելու գործում։ Դուք պետք է կոմունիստական շինարարության առաջին շինարարները լինեք այն ժլլնոմավոր շինարարների մեջից, որոնցից պետք է հանդիսանա յուրաքանչյուր յերի-

ատաբդ ազատարդ, յուրաքանչյուր յերիտասարդ ապագին: Առանց բանվորական ու գյուղացիական յերիտասարդության ամբողջ մասսան զեպի կոմունիզմը այս շինարարության պրոցեվելու՝ դուք կոմսոմոլական հասարակություն չեք կառուցի:

Այստեղ, ընկերներ, յես մոռացում եմ այն հարցին, թե ինչպես պետք է մենք կոմսոմոլը ստեղծենք, և ձեր հնարների առանձնահատկությունն ինչ պետք է լինի:

Յես այստեղ ամենից առաջ կանգ կառնեմ կոմսոմոլական բարոյականության հարցի վրա:

Դուք պետք է ձեզ գաստիարակեիք կոմսոմոլական դառնաք: Յերիտասարդության Միության խնդիրն այն է, որ իր պրակտիկ գործունեության այնպես կազմակերպի, որ այս յերիտասարդությունը ստեղծվի, կազմակերպվելով, մեծանալով, կռվելով՝ դաստիարակի իրեն ու այն բոլորին, որոնք նրան հաջորդում են իրենց գեկավարը, տնօրինի այնպես, որ կրթելով՝ կոմսոմոլսանը պատրաստի: Հարկավոր է, որ արդի յերիտասարդության կրթության, զարգացման և ուսման ամբողջ գործը լինի մի դաստիարակություն, որ նրա մեջ կոմունիստական բարոյականություն և պատվասեր:

Սակայն կա արդյոք կոմունիստական բարոյականություն: Կա արդյոք կոմունիստական բարոյականություն: Ի հարկե այս հաճախ բանն այնպես են ցույց տալիս, որ իբրև թե մենք չունենք մեր բարոյականությունը, և շատ հաճախ բուրժուազիան մեզ մեղադրում է, թե մենք, կոմունիստներս, ճնշում ենք ամեն մի բարոյականություն: Սա մի միջոց է գաղափարները կեղծելու և բանվորների ու գյուղացիների աչքերը փշելու համար:

Մենք ինչ քամահրով ենք մեծում բարոյախոսությունը, մեծում բարոյականությունը:

Այն իմաստով, որ քարոզում էր բուրժուազիան, որը բարոյականությունը բղխեցնում էր ստածու պատվիրաններից: Այս մասին մենք, իհարկե և ասում ենք, որ աստծուն չենք հավատում և շատ լավ դիտենք, որ աստծու անունից խոսում էր հոգևորականությունը, խոսում եյին կալվածատերերը, խոսում էր բուրժուազիան, որպեսզի իր շահագործողական շահերն ապահովի: Յեվ կամ այս բարոյախոսությունը վերցնանք բարոյականության թեզարդանքներից, աստծու պատվիրաններից բղխեցնելու, ներանք այն բղխեցնում եյին իդեալիստական կամ կրոնական ֆրազներից, որոնք նույնպես մինչև հիմա հանդում եյին այն բանին, որ շատ նման է աստծու պատվիրաններին:

Մենք մի այնպիսի բարոյականություն, որ առնված է պրակտիկայից, արտադրական պրոցեսից, մենք մեծում ենք. մենք ասում ենք, որ այս խաբեություն է, որ այս մոլորեցումն է և բանվորների ու գյուղացիների մտքի մթագնում՝ հանուն կալվածատերերի ու կապիտալիստների շահերի:

Մենք ասում ենք, որ մեր բարոյականությունը լինելին ստորադրված է պրոլետարիատի դասակարգային կռվի շահերին: Մեր բարոյականությունը բղխում է պրոլետարիատի դասակարգային կռվի շահերից:

Հին հասարակությունը հիմնված եր կալվածատերերի ու կապիտալիստների կողմից բոլոր բանվորներին ու գյուղացիներին ճնշելու վրա: Մենք պետք է խորտա-

կիյնենք այս, պետք է նրանց տապալինք, իսկ սրա համար հարկավոր եր մի ուրիշ ուժ ստեղծել։ Ներկայիս ուժը չէ, մոր պետք է այսպիսի մի ուրիշ ուժ ստեղծի։

Այսպիսի միությունն կարող էին առաջ բերել ֆաբրիկանները, գործարանները միայն, հնարյա նրանից արձնացած ու խրատված, մարդված պրոլետարիատը միայն։ Այն ժամանակ միայն, երբ կազմվեց այս դասակարգը, այն ժամանակ սկսվեց մի մասսայական շարժում, մորը հասցրեց այն բանին, մոր այժմ տեսնում ենք. այն է՝ պրոլետարական հեղափոխության հաղթանակին հասցրեց ամենաքույլ երկրներից մեկում, մորը երեք տարի պաշտպանվում է ամբողջ աշխարհի բուրժուազիայի գրոհից։

Տեմ մենք տեսնում ենք, թե ինչպես պրոլետարական հեղափոխությունն աճում և ամբողջ աշխարհում։ Այժմ փորձի հիման վրա մենք տալիս ենք, մոր միայն պրոլետարիատը կարող եր ստեղծել մի այսպիսի միություն, մորի հետևից գնում է բաժան-բաժան ժողովուրդը, փոշիացած գյուղացիությունը, մի ուժ, մոր դիմադրել և շահագործողների բոլոր գրոհների ժամանակ։ Բանվորների այս դասակարգը միայն կարող է ոգնել աշխատավոր մասսաներին, մոր սրանք միանան, համախմբվեն և վերջնականապես պաշտպանեն, վերջնականապես ոչնչացնեն կոմունիստական հասարակությունը, վերջնականապես կառուցեն այն։

Ահա թե ինչու մենք ասում ենք,—մեզ համար մարդկային հասարակությունից դուրս բարոյականություն չկա. այդ խարեբայություն է։ Մեզ համար բարոյականությունն ստորադրված է պրոլետարիատի դասակարգային կռվի շահերին։

Իսկ վերն է այս դասակարգային կռիվը։ Այն՝ ցարին տապալելն է, կապիտալիստներին տապալելն է, կապիտալիստների դասակարգը վոչնչացնելն է։

Իսկ ինչ բան են դասակարգերն ընդհանրապես։ Այս այն է, մոր հասարակության մի մասին հնարավորություն է տալիս մյուսի աշխատանքը յուրացնելու։

Եվեթե հասարակության մի մասը յուրացնում է ամբողջ հողը,—ստացվում է կալվածատերերի ու գյուղացիների դասակարգ։ Եվեթե հասարակության մի մասը տեր է ֆաբրիկների ու գործարանների. նրանի ակցիաները ու կապիտալներ, իսկ մյուն մասն աշխատում է այս գործարաններում,—մենք ստանում ենք կապիտալիստների ու պրոլետարների դասակարգ։

Ցարին վոնդելը դժվար չեր. սրա համար ընդամենը միքանի որ հարկավոր էղավ։ Շատ դժվար չեր կալվածատերերին վոնդելը. այս կարելի է անել միքանի ամսում. շատ դժվար չէ կապիտալիստներին էլ վոնդելը։

Սակայն դասակարգերը վերացնելն անհամեմատ ավելի դժվար է. դեռ մինչև այժմ էլ շարունակվում է հասարակության բաժանումը բանվորների ու գյուղացիների։ Եվեթե գյուղացին հաստատված է առանձին հողամասի վրա և յուրացնում է ավելորդ հացահատիկը, այսինքն այն հացահատիկը, մոր մեկ նրան է հարկավոր, մեկ էլ նրա անասուններին, իսկ մյուս բոլոր մարդիկ մնում են անհաց, ապա գյուղացին արդեն դառնում է շահագործող։ Նա մորքան ավելի է հացահատիկ պահում իրեն, այնքան ձեռնտու է նրան, իսկ մյուսները թող սոված մնան. «Մորքան ավելի են սոված մնում, մեզ այնքան ավելի թանգ կծախեմ այս հացահատիկը»։

Հարկավոր է, որ բոլոր մարդիկ աշխատեն մեկ ընդհանուր պլանով ընդհանուր հողի վրա, ընդհանուր ֆաբրիկաներում և գործարաններում, ընդհանուր կարգ ու կանոնով։ Արդյոք հեշտ է այս անել։ Դուք տեսնում եք, որ այս խնդրում չի կարելի նույնպես հեշտությամբ լուծան հասնել, ինչպես ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին վռնդելու ժամանակ էր։ Այստեղ հարկավոր է, որպեսզի պրոլետարիատը վերակըրթի, նորինորո սովորեցնի գյուղացիների մի մասին, իր կողմը քաշի նրանց, որոնք աշխատավոր գյուղացիներ են, որպեսզի վոչնչացնի այն գյուղացիների դիմադրությունը, որոնք հարուստ են և ատում են միացածների կարիքների հաշվին։

Այս նշանակում է՝ պրոլետարիատի կռիվը դեռ չի ավարտված այն բանով, որ տապալեցինք ցարին, վռնդեցինք կալվածատերերին ու կապիտալիստներին, այն ինչ այս հենց այն կարգերի խնդիրն է, որ մենք անվանում ենք պրոլետարիատի դիկտատուրա։

Դասակարգային կռիվը շարունակվում է. այն իր ձևերն է միայն փոխել։ Պրոլետարիատի այս դասակարգային կռիվը մղվում է նրա համար, որ չկարողանան վերադառնալ հին շահագործողները, նրա համար, որ խավար գյուղացիության բաժան—բաժան եղած մասսան միանա և մեկ միություն կազմի։ Դասակարգային կռիվը շարունակվում է. և մեր խնդիրն է՝ բոլոր շահերն ստորադրել կռվին։

Ցեղ մենք մեր ամբողջ կոմունիստական բարոյականությունը այս խնդրին ենք ստորադրում։ Մենք ասում ենք.— բարոյականությունն այն է, որ ծառայում է հին շահագործողական հասարակությունը

քայքայելու և բոլոր աշխատավորներին պրոլետարիատի շուրջը համախմբելու գործին, պրոլետարիատ, որը կոմունիստների նոր հասարակություն է ստեղծում։

Կոմունիստական բարոյականությունն այն է, որը ծառայում է այս կռվին, որը աշխատավորներին միացնում է ամեն մի քահագործման դեմ, ամեն մի մանր սեփականության դեմ, որովհետև մանր սեփականությունը մեկ մարդու ձեռքն է տալիս այն, ինչ արտադրվել է ամբողջ հասարակության աշխատանքով։

Մեզանում հողը համարվում է ընդհանուրի սեփականություն։

Իսկ չնե՞ն այս ընդհանուր սեփականությունից չես ինձ համար վերցնում եմ, ա՛յ, մի վորոշ կտոր, այս հողամասի վրա մշակում, ստանում եմ չերկու անգամ ավելի հաց, քան ինձ հարկավոր է, և այդ ավելցուկով չարաշահություն եմ անում, մսածում եմ, թե վորքան շատ լինեն սովածները, այնքան թանկ կվճարեն, մի թե այն ժամանակ չես իրրև կոմունիստ եմ վարվում։

Վա՛յ, իրրև շահագործող, իրրև սեփականատեր։ Սրա դեմ պետք է կռիվ տալ։

Ցե՞ն այսպես թողնենք, ապա ամեն ինչ կեա կգլորվի դեպի կապիտալիստների իշխանություն, դեպի բուրժուազիայի իշխանություն, ինչպես որ այս պատահել է շատ անգամ նախկին հեղափոխությունների ժամանակ։ Իսկ վորպեսզի թույլ չտանք, որ նորից վերականգնի կապիտալիստների ու բուրժուազիայի իշխանությունը, սրա համար հարկավոր է թույլ չտալ չարչիություն, սրա համար հարկավոր է, որ առանձին անհատները հարստություն չշահեն միացածների հաշվին, սրա համար հարկավոր է, որ աշխատավորները

միանան պրոլետարիատի հետ և կոմունիստական հասարակություն կազմեն։

Հենց այս է գլխավոր առանձնահատկությունն այն բանի, որ կոմունիստական յերիտասարդության կազմակերպության ու միության հիմնական խնդիրն է հանդիսանում։

Հին հասարակությունը հիմնված եր այնպիսի ընկերքունքի վրա, որ կամ դու յես կողոպտում ուրիշին, կամ ուրիշն է կողոպտում քեզ, կամ դու յես աշխատում ուրիշի համար, կամ նա քեզ համար, կամ դու սարկատեր ես, կամ սարուկ ես։ Յեվ հասկանալի յե, որ այսպիսի հասարակության մեջ կրթված մարդիկ, կարելի յե ասել, իրենց մոր կաթի հետ ծծում, յուրացնում են այս հոգեբանությունը, սովորությունը, հասկացողությունը,—կամ սարկատեր, կամ սարուկ, կամ մանր սեփականատեր, մանր ծառայող, մանր չինովնիկ, ինտելիգենտ, մի խոսքով՝ մի մարդ, որ հոգում է այն մասին միայն, որ իրեն սեփականն ունենա, իսկ ուրիշը նրա փուչքը չե։

Յեթե յես տնտեսությամբ եմ զբաղվում այս հողամասի վրա, իմ հողը չեմ ուրիշը. յեթե մի ուրիշը տալած կինա, ավելի լավ, յես իմ հացահատիկն ավելի թանգ կծախեմ։ Յեթե յես ունեմ իմ փոքրիկ պալատն իրըև բժիշկ, իրըև ինժիներ, ուսուցիչ, ծառայող, յես չե գործ չունեմ ուրիշի հետ։

Թեև կեղծելով, իշխանությունն ունեցողներին սիրաշահելով՝ յես պահեմ իմ փոքրիկ պալատը, բայց այս՝ դեռ կարողանամ առաջ էլ անցնել, բուրժուա դասակը կոմունիստը չի կարող այսպիսի հոգեբանություն ու այսպիսի արամադրություն ունենալ։

Յերբ բանվորներն ու գյուղացիք ապացուցեն, թե մենք կարողանում ենք մեր ուժով մեզ պաշտպանել և նոր հասարակություն ստեղծել, ահա հենց այստեղ էլ սկսվեց կոմունիստական նոր դաստիարակությունը, դաստիարակություն շահագործողների դեմ կռվելիս, դաստիարակություն, որ կատարվում եր պրոլետարիատի հետ կնքած միության մեջ, ընդդեմ յեսատերների ու մանր սեփականատերերի, ընդդեմ այն հոգեբանության ու այն սովորությունների, որոնք ասում են.—յես իմ վաստակը ձեռք կբերեմ, իսկ ինացածի հետ ուշ մի գործ չունեմ։

Ահա թե ովքեն և պատասխանն այն հարցի, թե ինչպես պետք է կոմունիզմ սովորի հասունացող յերիտասարդ սերունդը։

Այս սերունդը կոմունիզմ կարող է սովորել միայն այն ժամանակ, յերբ իր ուսման, դաստիարակության ու կրթության յուրաքանչյուր քայլը շաղկապի պրոլետարների ու աշխատավորների ընդհանուր կռվի հետ՝ ընդդեմ շահագործողական հին հասարակության։

Յերբ մեզ հետ խոսում են բարոյականության մասին, մենք ասում ենք.—կոմունիստի համար ամբողջ բարոյականությունն այս միաձույլ, համերաշխ կարգապահությունն ու շահագործողների դեմ մղվող դեռ տակտիկական, մասսայական կռիվն է։ Հավիտենական բարոյականության մենք չենք հավատում և բարոյականությանը վերաբերող ամեն տեսակ հեքյաթների խարեբայությունը մերկացնում ենք։

Բարոյականությունը մի միջոց է, որպեսզի մարդկային հասարակությունն ավելի բարձրանա, աղատվի աշխատանքի շահագործումից։

Վորպեսզի այս իրականանա, հարկավոր է յերիտասարդության այն սերունդը, վոր սկսել է բուրժուազիայի դեմ մղվող կարգապահ ու կատաղի կռվի պայմաններում դիտակից մարդ դառնալ։ Այս կռվում հիշյալ սերունդն իսկական կռվունիստներ և կրթում, հիշյալ սերունդն այս կռվում պետք է ստորադրի և այս կռվի հետ շաղկապի իր ուսման, կրթության ու դաստիարակության ամեն մի քայլը։

Կռվունիստական յերիտասարդության դաստիարակությունն այն չպիտի լինի, վոր նրան ամեն տեսակի հաճոյական ճառեր ու բարոյականության կանոններ ժառուցեն։ Այս չէ դաստիարակությունը։

Յերբ մարդիկ տեսնում էին, թե ինչպես իրենց հայրերն ու մայրերն ապրում էին կալվածատերերի ու կապիտալիստների ճնշման տակ, յերբ նրանք իրենք մասնակցում էին այն տանջանքներին, վորոնք տեղում էին շահագործողների դեմ կռիվ սկսողներին, յերբ նրանք տեսնում էին, թե ինչպիսի զոհեր եր պահանջում նվաճածի պաշտպանության համար մղվող այս կռիվը շարունակելը, յերբ տեսնում էին, թե ինչ կատաղի թշնամի ունեն կալվածատերերին ու կապիտալիստներին,— այն ժամանակ այս մարդիկ այսպիսի պարագայում դաստիարակվում և կռվունիստ էին դառնում։

Կոմունիստական բարոյականության հիմքը կոմունիզմն ամրապնդելու և ավարտելու համար մղվող կռիվն է։ Ահա թե ինչն է կռվունիստական դաստիարակության և ուսման հիմքն էլ։ Ահա թե ինչ է պատասխանն այն հարցի, թե ինչպես պետք է կռվունիզմ սովորել։

Մենք չէինք հավատա ուսմանը, դաստիարակությանն ու կրթությանը, յեթե այս խոսկված լիներ միայն դպրոցում և կտրված փոթորկալի կյանքից։ Ինչի բանվորներն ու գյուղացիք ճնշվում են կալվածատերերի ու կապիտալիստների կողմից, քանի դպրոցները մնում են կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքում, յերիտասարդ սերունդը կույր ու խավար է մնում։

Իսկ մեր դպրոցը յերիտասարդությանը պետք է տա գիտության հիմունքներ, պետք է տա կարողություն, վոր իրենք կռվունիստական հայացքներ մշակեն, պետք է նրանց զարձնի կրթած մարդ։ Մեր դպրոցն այն ժամանակի ընթացքում, քանի դեռ մարդիկ սովորում են այնտեղ, պետք է նրանցից այն կռվի մասնակիցները պատրաստի, վոր մղվում է շահագործողներից ազատագրվելու համար։

Յերիտասարդության Կռվունիստական Միությունը միայն այն ժամանակ կարդարացնի իր կոչումը, վոր ինքը կռվունիստական յերիտասարդ սերնդի միությունն է, յեթե իր ուսման, դաստիարակության, կրթության յուրաքանչյուր քայլը շաղկապի այն ընդհանուր կռվին մասնակցելու հետ, վոր բոլոր աշխատավորները մղում են շահագործողների դեմ։ Վորովհետև դուք շատ լավ գիտեք, վոր քանի Ռուսաստանը միակ բանվորական հանրապետությունն է մնում, իսկ ամբողջ մնացած աշխարհում հին, բուրժուական հասարակակարգ գոյություն ունի, մենք նրանցից թույլ ենք, մեզ ամեն անգամ նոր զրոհ է սպառնում. միայն այն դեպքում, յեթե մենք սովորենք միանալ ու միաբան լինել, մենք կհաղթենք հետագա կռվում և ամրապնդվելով՝ իսկապես անպարտելի կդառնանք։

Այսպիսով, կոմունիստ լինել՝ նշանակում է կազմակերպել ու միացնել ամբողջ հասունացող սերունդը, դաստիարակության ու կարգապահության որինակ տալ այս կռվի միջոցին։ Այն ժամանակ դուք կկարողանաք սկսել ու ավարտին հասցնել կոմունիստական հասարակության շենքի կառուցումը։

Վորպեսզի բոլորիդ ավելի պարզ դարձնեմ այս, ես ձեզ որինակ կբերեմ ձեզ։ Մենք մեզ կոմունիստ ենք անվանում։

Ի՞նչ է կոմունիստը։

Կոմունիստ—լատինական բառ է։ Կոմունիստ նշանակում է ընդհանուր։ Կոմունիստական հասարակություն նշանակում է ամեն ինչ ընդհանուր է—հողը, գործարանները, ընդհանուր աշխատանք,—ահա թե ինչ է կոմունիզմը։

Կարող է արդյոք աշխատանքն ընդհանուր լինել, եթե մարդկանցից յուրաքանչյուրն իր տնտեսությունն է վարում առանձին հողամասի վրա։ Միանգամից ընդհանուր աշխատանք ստեղծել չես կարող։ Այս յերկնքից չի ընկնում. պետք է այս բանը սրբքնությամբ, տանջանքով ձեռք բերել, ստեղծել. այս առաջ է գալիս կռվի ընթացքում։ Այստեղ այլևս հին դրքուկ չկա—դրքուկին վոչ վոք չեր հավատա։ Այստեղ արդեն սեփական կենսական փորձն է։

Ձերը Կոլչակն[2] ու Դենիկինը[3] վրա եկին գալիս Սիբիրից ու հարավից, գյուղացիները նրանց կողմն եկին։ Բոլշևիկները նրանց դուր չեր գալիս, վորովհետև բոլշևիկները հացահատիկն առնում են հաստատ գնով։ Իսկ յերբ գյուղացիք Սիբիրում և Ուկրաինայում փորձեցին Կոլչակի ու Դենիկինի իշխանությունը, նրանք հաս-

կացան, վոր, գյուղացին այլ ընտրություն չունի. կամ պետք է գնաս կապիտալիստի մոտ, և նա քեզ տերությունն կտա կալվածատերերին, կամ պետք է դընաս բանվորի յետևից, վորը, ճիշտ է, յուղ ու մեղր լվացող աղբյուրներ չի խոստանում, վորը ծանր կռվի մեջ քեզնից պահանջում է յերկաթե կարգապահություն ու հաստատակամություն, բայց վորը քեզ կհանի կապիտալիստների ու կալվածատերերի ստրկությունից։

Իսկ յերբ գյուղացիք սեփական փորձով ըմբռնեցին ու տեսան, այն ժամանակ նրանք դարձան կոմունիզմի դժվարին ղպրոցն անցած գիտակից կողմնակիցներ։

Հենց այսպիսի փորձն էլ պետք է Յերիտասարդության կոմունիստական Միությունն իր ամբողջ գործունեության հիմք դարձնի։

Ձես պատասխանեցի այն հարցերին, թե մենք ինչ պետք է սովորենք, ինչ պետք է վերցնենք հին դպրոցից և հին գիտությունից։ Ձես կաշխատեմ պատասխանել այն հարցին էլ, թե ինչպես պետք է սովորել այս, միայն նշանով, վոր դպրոցում ուսնեցած գործունեության յուրաքանչյուր քայլը, դաստիարակության և ուսման յուրաքանչյուր քայլն անբակատելի կերպով շաղկապենք բոլոր աշխատավորների կռվին ընդդեմ շահագործողների։

Յերիտասարդության այս կամ այն կազմակերպության աշխատանքի փորձից վերցրած մի քանի որինակներով յես ակնառու կերպով ձեզ ցույց կտամ թե ինչպես պետք է ընթանա կոմունիզմի այս դաստիարակությունը։

Բոլորը խոսում են անգրագիտությունը լուծարելի

յենթարկելու մասին։ Դուք գիտեք ինչ, անգրագետ երկրում չի կարելի կոմունիստական հասարակություն կառուցել։ Բավական չէ, որ խորհրդային իշխանությունը հրամայի, կամ կուսակցությունը որոշ լոզունգ տա, կամ լավագույն գործիչների մի որոշ մասը նետվի այդ գործի մեջ։ Սրա համար հարկավոր է, որ ինքը՝ երիտասարդ սերունդն իր ձեռքն առնի այդ գործը։

Կոմունիզմն այն է, որ այդ երիտասարդությունը, այդ երիտասարդներն ու աղջիկները, որոնք կոմունիստական Միության անդամ են, ասեն.—այդ մեր գործն է, մենք մեծանք և գնանք դյուցերը՝ անգրագիտությունը լուծարքի յենթարկելու, որպեսզի մեր հասունացող սերունդն անգրագետներ չունենա։ Մենք ձգտում ենք, որ հասունացող երիտասարդության ինքնագործունեությունն ուղղված լինի այդ գործին։

Դուք գիտեք, որ Ռուսաստանը խավար, անգրագետ յերկրից շուտով գրագետ յերկիր դարձնել չի կարելի, բայց յեթե այդ գործն իր ձեռքն առնի Երիտասարդության Միությունը, յեթե ամբողջ երիտասարդությունն աշխատի հոգուտ բոլորի, այդ ժամանակ այդ միությունը, որ շաղկապում է 400.000 երիտասարդների ու աղջիկների, իրավունք ունի Երիտասարդության Կոմունիստական Միություն կոչվելու։ Միության խնդիրը նաև այն է, որ այդ կամ այն գիտելիքները յուրացնելով՝ օգնի այն երիտասարդությանը, որն ինք իրեն չի կարող պատրաստել անգրագիտության խավարից։

Երիտասարդության Միության անդամ լինել՝ նշանակում է գործն այնպես տանել, որ իր ամբողջ աշխատանքը, իր ուժերն ընդհանուր գործին նվիրվեն։

Ահա այդ է կոմունիստական դաստիարակությունը։ Միայն այսպիսի աշխատանքի ընթացքում է յերիտասարդը կամ աղջիկը իսկական կոմունիստ դառնում։ Միայն այն դեպքում նրանք կոմունիստ կդառնան, յեթե կարողանան այս աշխատանքով գործնական հաջողություններ ձեռք բերել։ Որինակի համար, վերցրեք քաղաքի արվարձանների բանջարանոցներում կատարվող աշխատանքը։ Երիտասարդության Կոմունիստական Միության խնդիրներից մեկն է այս։ Ժողովուրդը սովամահ է լինում, ֆաբրիկաներում ու գործարաններում սով է։ Սովից փրկվելու համար հարկավոր է բանջարանոցները զարգացնել, բայց հողագործությունը կատարվում է հին յեղանակով։

Ցույց ահա հարկավոր է, որ ավելի գիտակից տարրերը գործի դիմեն, և դուք այն ժամանակ կտեսնեք, որ բանջարանոցները մեծանում են, նրանց տարածությունն ընդլայնվում, արդյունքը լավանում է։ Երիտասարդության Կոմ. Միությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա այդ գործին։ Յուրաքանչյուր միություն կամ միության յուրաքանչյուր բջիջ պետք է այդ գործն իր գործը համարի։

Երիտասարդության Կոմունիստական Միությունը պետք է լինի մի հարվածային խումբ, որն ամեն մի աշխատանքի տալիս է իր ոգևորությունը, ցուցահանում իր նախաձեռնությունը, իր ձեռներեցությունը։ Միությունը պետք է լինի այնպիսի միություն, որ ամեն մի բանվոր տեսնի, թե նրանք այնպիսի մարդիկ են, որոնց ուժությունքը հնարավոր ուժություն է, իրեն հասկանալի է, որոնց ուժությունքին թերևս նա միանգամից չի հավատա էլ, սակայն որոնց կենդանի աշ-

խատանքից, նրանց գործունեությունից կտեսնեն, որ սրանք իրոք այն մարդիկն են, որոնք իրեն ուղիղ ճանապարհն են ցույց տալիս։

Յեթե Յերիտասարդության Կոմունիստական Միությունը չկարողանա բոլոր ասպարեզներում իր աշխատանքն այսպես կազմակերպել, այս նշանակում է, որ Միությունը մոլորվելով՝ վերադառնում է դեպի հին բուրժուական ուղին։

Մեր դաստիարակությունը պետք է շաղկապել աշխատավորների շահագործողների դեմ մղվող կռվին, որպեսզի աշխատավորներին ոգնենք՝ այն խնդիրները լուծելու, որոնք ըղխում են կոմունիզմի ուսմունքից։

Միության անդամները պետք է իրենց յուրաքանչյուր ազատ ժամը գործադրեն այն բանի վրա, որ բարելավեն բանջարանոցը և կամ որևէ ֆաբրիկայում կամ գործարանում յերիտասարդության ուսուցում կազմակերպեն և այլն։

Մենք ցանկանում ենք Ռուսաստանն ազատ ու խեղճ յերկրից հարուստ յերկիր դարձնել։ Յեվ հարկավոր է, որ Յերիտասարդության Կոմունիստական Միությունն իր կրթությունը, իր ուսումն ու իր դաստիարակությունը միացնի բանվոր. ու գյուղացիների աշխատանքին, որպեսզի սինդ չփակվի դպրոցներում և չսահմանափակվի կոմունիստական գրքեր ու բրոշյուրներ կարդալով միայն։

Բանվորների ու գյուղացիների հետ միասեղ աշխատելով միայն կարելի կ՚իսկական կոմունիստ դառնալ։

Յեվ հարկավոր է, որ բոլորը տեսնեն, թե ամեն մեկը, որ Յերիտասարդության Միության անդամ է, պետք է

դրագետ է և միաժամանակ գիտե աշխատել էլ։ Յերբ բոլորը կտեսնեն, թե ինչպես մենք հին դպրոցից դուրս ենք վանել հին մեքենական վարժությունը՝ այս փոխարինելով գիտակցական կարգապահությամբ, յերբ կտեսնեն, թե ինչպես ամեն մի յերիտասարդ գնում է շաբաթօրյակին մասնակցելու, թե ինչպես նրանք ոգտագործում են արվարձանի յուրաքանչյուր, տնտեսությունը, վորպեսզի ոգնեն բնակչությանը, ժողովուրդն աշխատանքի վրա հնայի վրչ այնպես, ինչպես նայում էր նրան առաջ։

Յերիտասարդության Կոմունիստական Միության խնդիրն այն է, վոր գյուղում կամ իր թաղում կազմակերպի ոգնություն մի աննպիսի գործի,—փոքրիկ որինակ եմ վերցնում,—ինչպես ժաքրությունն ապահովելու կամ անուղղը բաշխելու գործն է։

Այս բանն ինչպես էր կատարվում կապիտալիստական հին հասարակության մեջ։

Յուրաքանչյուրն աշխատում էր միայն իր համար և վրչ վոք չէր նայում, թե կան արդյոք այստեղ մերեր կամ հիվանդներ, կամ թե ամբողջ տնտեսությունը կենդ վրա կ՚ընկնում, վորը այս պատճառով ճնշված, տարկացած կացության մեջ է։ Ո՞վ պետք է կռվի այս բանի դեմ։ Յերիտասարդության միությունները, վորոնք պետք է ասեն.— մենք այս կբարեփոխենք, մենք կկազմակերպենք յերիտասարդների խմբեր, վորոնք կոգնեն ժաքրությունն ապահովելու կամ անուղղը բաշխելու գործին՝ սիստեմատիկ կերպով տները շրջելով. այս յերիտասարդները կազմակերպված կգործեն ամբողջ հասարակության ոգտին՝ ուժերն ուղիղ բաշխելով և ցույց տալով, վոր աշխատանքը պետք է լինի կազմակերպված աշխատանք։

Այն սերունդը, որի ներկայացուցիչներն այժմ մոտ 50 տարեկան են, չի կարող հույս ունենալ, թե ինքը կոմունիստական հասարակութիւն կտեսնի։ Մինչև այն ժամանակ այս սերունդը կմեռնի, կվերջանայ։

Իսկ այն սերունդը, որը այժմ 15 տարեկան է, թե՛ կտեսնի կոմունիստական հասարակութիւնը և թե՛ ինքը կկերտի այս հասարակութիւնը։

Ցեղ այդ սերունդը պետք է իմանայ, որ նրա կյանքի ամբողջ խնդիրն այս հասարակութիւնը կառուցելն է։

Հին հասարակութեան մէջ աշխատանքը կատարում էր առանձին ընտանիքը, և որչ որք չէր միացնում աշխատանքը, բացի կալվածատերերից ու կապիտալիստներից, որոնք ճնշում էին ժողովրդական մասսաներին։ Մենք պետք է յուրաքանչյուր աշխատանք, որքան էլ այս կեղտոտ ու դժվարին լինի, այնպես կազմակերպենք, որ յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի իրեն նայի այս աշխատանքի մեծ բանակի մի մասնիկն եմ և կարող եմ ինքս իմ կյանքը կերտել՝ առանց կալվածատերերի ու կապիտալիստների, կարող եմ հաստատել կոմունիստական հասարակարգ։

Հարկավոր է, որ Ցերիտասարդութեան Կոմունիստական Միութիւնը բոլորին մատաղ հասակից դաստիարակի գիտակցական ու կարգապահ աշխատանքի մեջ։

Ահա թե ինչ կերպ մենք կարող ենք հասնել, որ դրած խնդիրները կլուծվեն։

Մենք պետք է նկատի ունենանք, որ հարկավոր է տասը տարուց վոչ պակաս ժամանակ՝ յերկրի ելեք-

տրիֆիկացիայի համար, վորպեսզի մեր աղքատացած յերկրի կարիքները հնարավոր լինի բավարարել տեխնիկայի վերջին նվաճումների համաձայն։

Ցեվ ահա այն սերունդը, որն այժմ 15 տարեկան է և որը 10–12 տարուց հետո պետք է ապրի կոմունիստական հասարակութեան մէջ,—պետք է իր ուսման բոլոր խնդիրները դնի այնպես, որ յուրաքանչյուր որ ամեն մի դյուղում, ամեն մի քաղաքում էլեկտրիֆիկացիայի գործնականորեն լուծի ընդհանուր աշխատանքի այս կամ այն, թեկուզ և ամենափոքր, ամենահասարակ խնդիրը։

Ինչ չափով որ այդ տեղի կունենա յուրաքանչյուր դյուղում, ինչ չափով որ կսկսի զարգանալ կոմունիստական սրցակցութիւնը, ինչ չափով որ յերիտասարդութիւնը կապացուցի, որ ինքը կարողանում է միացնել իր աշխատանքը,—այդ բոլորի հետ միասին ապահովված կլինի կոմունիստական շինարարութեան հաջողութիւնը։

Միայն դիտելով յուրաքանչյուր յուր քայլն այդ շինարարութեան հաջողութեան տեսակետից, միայն իրեն հարց տալով, թե արե՞լ ենք մենք արդյոք ամեն բան, որպեսզի լինենք միացյալ, դիտակից աշխատավորներ,—միայն այդ յերկարատև պրոցեսում Կոմունիստական Ցերիտասարդութեան Միութիւնը կկարողանա հասնել այն բանին, որ իր կես միլիոն անդամներին կմիացնի աշխատանքի մի բանակի մեջ և դեպի ինքն ընդհանուր հարգանք առաջ կբերի։

ԼԵՆԻՆ. Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՅԻ ԹԵԶԻՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐԱՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Չի կարելի այդպես գրել պոլիտեխնիկական կրթության մասին, դուրս և գալիս վերացական մի բան հեռավոր ապագայի համար. հաշվի չի առնում հրատապ հիմիկվա ցավոտ իրականությունը:

Պետք է

1) Ավելացնել 1 կամ 2 թեզիս պոլիտեխնիկական կրթության սկզբունքային նշանակության մասին:

ԸՍՏ ՄԱՐՔՍԻ,

Ըստ Ռ կ կ ծրագրի:

2) Վերոշակի ասել, որ ոչ մի կերպ մենք չենք կարող հրաժարվել հենց պոլիտեխնիկական կրթության սկզբունքից և ճնարավորության սահմանցներում այն անմիջականորեն իրագործելուց

Ցերկրորդ աստիճանի (12-17) մասին ասել.

Ուղղել.—Ձուլել ոչ որպէս 2-րդ աստիճանը, այլ 13, 14 տարեկանից, ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ և ՎՈՐՈՇՈՒՄՈՎ:

Հանրապետության ծայրահեղ ծանր տնտեսական դրությունը ներկա ժամանակում պահանջում է անպայմանորեն և անհապաղ

2-րդ աստիճանի դպրոցը ձուլել պրոֆտեխդպրոցի հետ.

2 րդ աստիճանը վերածել պրոֆտեխդպրոցի, բայց դրա հետ միասին, ՎՈՐՊԵՍԶԻ Ա.Ց.Դ ԶՎԵՐԱՇՎԻ Ա.Ր-ՀԵՍՏԱԳԻՏՈՒԹՑԱՆ, պետք է սահմանել հետևյալ ճշգրիտ կանոնները.

1) Խուսափել վաղաժամ մասնագիտացումից, այդ մասին մշակել հրահանգ:

2) Բոլոր պրոֆտեխդպրոցներում ընդարձակել հանրակրթական առարկաները:

Կազմել ծրագիրը ըստ տարիքների

Հումանիզմ. Աշխարհագրություն. Պատմություն առհասարակ. Գրականություն Հիգափոխության պատմություն. և այլն: 1917 թ հեղափոխության պատմություն.

3) Անպայման խնդիր դնել ԱՆՀԱՊԱՂ անցնելու պոլիտեխնիկական կրթության, կամ ավելի ճիշտ՝ անհապաղ իրականացնելու դեպի պոլիտեխնիկական կրթությունը տանող հենց մոտիկ մատչելի ՄԻ ՇԱՐՔ ՔԱՅԼԵՐ, ինչպես օրինակ.—

Գոնե մոտ ապագայի համար Ա.) Ելեկտրական կայարանի այցելություն (մոտակա) և մի շարք դասախոսություններ ելեկտրականում կազմակերպվելիք փորձերի հետ կապված. ելեկտրականության հետ կապված ամենամոտակի հնարավոր ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ. անպիղապես մշակել մանրամասն ծրագրեր.

(1 այցելություն, 5, 10 դասընթացք, 1, 2 ամսվա և այլն)

բ) Նույնը,—յուրաքանչյուր՝ տանելի կերպով կազմակերպված քաղհրդային տնտեսություն:

գ) Նույնը,—յուրաքանչյուր տանելի կերպով կազմակերպված գործարան:

Գոնե մոտ ապագայի համար Դ) Մոբիլիզացիայի յենթարկել (ելեկտրականությունից և պոլիտեխնիկա-

կան կրթութ յունից դասախոսութ յուններ կարդալու, գործնական պարապմունքները ղեկավարելու համար և այլն) բոլոր ինժեներներին, գյուղատնտեսներին, բոլոր համալսարանավարտներին և ֆիզիկոմաթեմատիկական ֆակուլտետ ավարտածներին:

ե) կազմակերպել և կառուցել պոլիտեխնիկական կրթութ յան փոքրիկ թանգարաններ, գնացքներ, շոգենավեր և այլն:

Այդ չափից դուրս կարևոր է: Մենք աղքատ ենք: Մեզ հարկավոր են ատաղձագործներ, փականագործներ ԱՆՄԻՋՈՑՆ: ԱՆՊԱՅՄԱՆ: ԲՈԼՈՐԸ պետք է դառնան ատաղձագործներ, փականագործներ և այլն, ԲԱՑ հանրակրթական և պոլիտեխնիկական մինիմումի վրա հավելումով:

[Ավելի ճիշտ՝ յերկրորդ աստիճանի բարձր դասարանների] Յերկրորդ աստիճանի(12-17) դպրոցների խնդիրն է.- տալ լուրջ իր գործն իմացող, վարպետ դառնալու միանգամայն ընդունակ և (փոխարինելու համար պատրաստ) պրակտիկ կերպով այդ գործի համար պատրաստված

ատաղձագործ
հյուսն,
փականագործ և այլն:

Այն պայմանով սակայն, որ այդ «արհեստավորն» ունենա այն բնդհանուր կրթությունը, առնվազն իմանա այս ինչ ու այնինչ դիտութ յուններին.- ճշտիվ ժամանակը՝ ինչ դիտութ յուններին.- հիմունքները. լինի կոմունիստ (ճշտիվ ժամանակը՝ ինչ պիտի իմանա), ՈՒՆԵՆԱ ՊՈԼԻՏԵԽ-

ԱՅՆ Է.—

ա) Հիմնական հասկացողութ յուններ (ճշտիվ վորոշել՝ ինչ հասկացողութ յուններ) ելեկտրականութ յան մասին:

բ) Մեխանիկական արդյունաբերութ յան մեջ ելեկտրականութ յունը կիրառելու մասին:

գ) Նույնը՝ քիմիականի նկատմամբ:

դ) Նույնը ՌՄՖԽՀ ելեկտրիֆիկացիայի պլանի մասին:

ե) Վոչ պակաս քան 1—3 անգամ, այցելել ելեկտրական կայանը, գործարանը, խորհրդանշութ յունը:

զ) Իմանալ ագրոնոմիայի այսինչ հիմունքները և այլն, մանրամասն մշակել դիտելիքների մինիմումը:

(5)

*
* *

«Բայց պետք է իմանալ և հիշել, վոր չի կարելի անցկացնել ելեկտրոֆիկացիան, քանի դեռ մեզ մոտ անգրագետները կան: Բավական չէ, վոր մեր հանձնաժողովն աշխատի վերացնել անգրագիտութ յունը... Բացի դրագիտութ յունից պետք են կուլտուրական, գիտակից, կրթված աշխատավորներ. անհրաժեշտ է, վոր գյուղացիների մեծ մասը վորոշակի պատկերացնի այն խնդիրները, վորոնք ծառացած են մեր առաջ: Կուսակցութ յան այդ ծրագիրը (ելեկտրիֆիկացիայի պլանի, կապ.) պետք է դառնա հիմնական գրքույկ, վոր պետք է մուտք գործի բոլոր դպրոցները: Դուք այդտեղ, ելեկտրիֆիկացիան անցկացնելու ընդհանուր պլանի հետ միասին, կգտնեք Ռուսաստանի յուրաքանչյուր շրջանի համար գրված հատուկ պլաններ: Տեղերը գնացող յուրաքանչյուր ընկեր կունենա իր շրջանի ելեկտրիֆիկացիան անցկացնելու համար

մշակված վորոշակի ծրագիր, խավարից նորմալ կյանքի անցնելուս ծրագիր։ Ցնդերուժ կարիլի է և պետք է համեմատել, մշակել, ստուգել ձեղ տրված զրույցները, ձգտելով, վոր յուրաքանչյուր դպրոցում, յուրաքանչյուր խրճիթում այն հարցին, թե ի՞նչ բան է կոմունիզմը, պատասխանեն վոչ միայն այն, ինչ գրված է կուսակցության ծրագրում՝ այլ և ասեն այն մասին, թե ինչպես պետք է դուրս գալ խավարի և տգիտության վիճակից։

Լավագույն աշխատողները, անտեսավարները, մասնագետները կատարել են իրենց տրված՝ Ռուսաստանի էլեկտրիֆիկացիայի և նրա տնտեսության վերականգման պլանը մշակելու առաջադրությունը։ Այժմ պետք է աշխատել այնպես անել, վոր բանվորները և գյուղացիները իմանան, թե վերչսի մեծ և դժվար է այդ խնդիրը և ի՞նչպես պետք է մոտենալ ու ձեռնարկել դրա լուծմանը։

Պետք է այնպես անել, վոր յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր էլեկտրակայան վերածվի լուսավորության ոջախի, և յեթե Ռուսաստանը ծածկվի էլեկտրակայանների և հզոր տեխնիկական սարքավորումների խիտ ցանցով,— ապա մեր կոմունիստական տնտեսական շինարարությունն որինակ կդառնա ապագա սոցիալիստական Եվրոպայի և Ասիայի համար»։

ԼԵՆԻՆ, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄԻՑ։ (Ցերկերի ժողովածու, XVII հ. 429-30 էջ. ռուս. հրատ.)։ 1920 թ. դեկտեմբեր.

«...Համագումարը հանձնարարում է ձեռք առնել բոլոր միջոցներն այդ (էլեկտրիֆիկացիայի) պլանի ամենալայն պրոպագանդի համար ... Այդ պլանի ուսումնասիրությունն առանց բացառության պետք է ժողովի հանրապետության բոլոր ուսումնական հիմնարկներում ...»

Խորհուրդների VIII համառուսական համագումարի բանաձևից։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ[1])

.... Ապա համագումարը հանձնարարում է կառավարությանը և խնդրում է ՀՍՄԿԽ-ին և արհմիությունների համառուսական համագումարին՝ բոլոր միջոցները ձեռք առնել այդ պլանի (էլեկտրիֆիկացիայի պլանի. կազմողներ) ամենալայն պրոպագանդի և քաղաքի ու գյուղի ամենալայն մասսաներին այդ պլանը ծանոթացնելու համար։ Այդ պլանի ուսումնասիրությունը պետք է ժողովի հանրապետության անխտիր բոլոր դպրոցական հիմնարկների ծրագրերի մեջ. յուրաքանչյուր էլեկտրական կայան և յուրաքանչյուր փոքրիշատե տանելի գրված գործարան ու խորհանտեսություն պետք է դառնան կենտրոն՝ էլեկտրականությանը, ժամանակակից արդյունաբերությանը ծանոթանալու համար, և կենտրոն դառնան էլեկտրիֆիկացիայի պլանի պրոպագանդի և նրա սիստեմատիկ դասավանդման համար։ Բոլոր բավարար՝ գիտական կամ գործնական նախապատրաստություն ունեցողները պետք է անխտիր մոբիլիզացիայի յենթարկվեն՝

1) Լենին, Ցերկերի ժողովածու, 26 հ. էջ 84-85 (հայերեն հրատարակություն)

կան կոմիտեն. . այս պակասությունն ընդհանուր դատողություններով ու վերացական լողունգներով „հրապուրվելն է“։

Պոլիտեխնիկական կրթության խնդիրը հիմնականում լուծել է մեր կուսակցության ծրագիրը, ծրագրի այն բաժնի 1 և 8 §§-ում, որ նվիրված են ժողովրդական լուսավորությանը։ Ծրագրի այս կետերն է հենց մատնանշում ԿԿ-ի դիրեկտիվը։ § 1-ը խոսում է պոլիտեխնիկական կրթության մասին մինչև 17 տարեկան հասակը։ § 8-ը խոսում է „17 տարեկան հասակից վեր անձերի պրոֆեսիոնալ կրթության լայն զարգացման մասին, բնդհանուր պոլիտեխնիկական գիտելիքների կապակցությամբ“։

Այսպիսով կուսակցության ծրագիրը միանգամայն պարզ է դրել հարցը։ Դատողություններն այն մասին, թե „պոլիտեխնիկական, թե՞ մասնատեխնիկական կրթություն“ պիտի լինի (չակերտների մեջ առած ու խիստ ընդգծած այս բառերն են հենց, որ իրենց հրեշային անհեթեթությամբ զանում ենք վերոհիշյալ „բյուլետենի հավելվածի“ չորրորդ եջում),— այս դատողությունները հիմնովին սխալ են, կոմունիստի համար ուղղակի անթույլատրելի և ցույց են տալիս թե ծրագիրը չիմանալը և թե վերացական լողունգներով ամենադատարկ կերպով „հրապուրվելը“։

Ցնեե մենք ստիպված ենք ժամանակավորապես տարիքը (ընդհանուր պոլիտեխնիկական կրթությունից պրոֆեսիոնալ-պոլիտեխնիկական կրթության անցնելու տարիքը) 17 տարեկանից 15-ի իջեցնելու, ապա տարիքի նորմայի այս իջեցումը „կուսակցությունը պետք է բացառապես համարի“ (ԿԿ-ի դիրեկտիվների

1-ին կետ) գործնական անհրաժեշտություն, ժամանակավոր մի ջոց, որ առաջ է յեկել „յերկրի ռազմատնտեսության ու ֆայֆայման“ պատճառով։

Նման իջեցումը ճիշտ ու քրեներով „հիմնավորելու“ ընդհանուր դատողությունները բացարձակ անհեթեթություն են. բավական է ընդհանուր և իրե թե տնտեսական դատողություններ տալու խաղերով զբաղվել Աշխատանքի ծանրության ամբողջ կենտրոնը պետք է փոխադրել „գործնական փորձի հաշվառման և ստուգման“, այս փորձի ցուցումների օպտիմատիզ օգտագործմանը վրա։

1921 թ., փետրվարի 7

„23. ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ“

Կա արդյոք տեղական, նահանգային, կամ գավառային գրադարանում „ՌՍՖՍՀ ելեկտրիֆիկացիայի պլանը“, Խորհուրդների VIII համագումարին արված պեկուցումը. քանի՞ որինակ...

Ի՞նչ միջոցներ են ձեռք առնված կատարելու Խորհուրդների VIII համագումարի վորոշումները՝ ելեկտրիֆիկացիայի պլանի ամենալայն պրոպագանդի մասին։ Այդ մասին տեղական լրագրերում քանի՞ հոդված և յերեր Ուենկնդիրների թիվն այդտեղ։

Այդպիսի զեկուցումների և դասավանդման համար արդյոք մոբիլիզացիայի յենթարկված են այն բոլոր տեղական աշխատավորները, վորոնք տեսական և գործնական գիտելիքներ ունեն ելեկտրականության մասին։ Քանի՞ այդպիսի աշխատավորներ կան։ Ինչպե՞ս և կատարվում դրանց աշխատանքը։ Ո՞րտեղ գործ ունեն արդյոք դասախոսությունների և պարապմունքների

համար տեղական կամ մոտակա էլեկտրական կայանները: Սրանց թիվը՝

Խորհուրդների VIII համագումարի վորոշման համաձայն՝ քանի՛ ուսումնական հիմնարկներում և մոցված էլեկտրիֆիկացիայի պլանի դասավանդումը՝

Լենին, Աշխատանքի և գաշապանության Խորհրդի նախագը տեղական խորհըդային հիմնարկներին, 1921 թ. մայիս. (Լենին, Ցերկերի ժողովածու, XVIII հ. I մաս, 253 եջ, ռուս. I հրատ.)

ՍՏԵՊԱՆՈՎԻ ԳՐՔԻ ՀԱՄԱՐ ԳՐՎԱԾ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ

«Խորհուրդների VIII համագումարը վորոշել է, վոր ՌՍՖԽՀ բոլոր,-առանց բացառության բոլոր,-ուսումնական հիմնարկներում պարտադիր է էլեկտրիֆիկացիայի պլանի դասավանդումը: Այդ վորոշումը, ինչպես և շատ ուրիշ վորոշումներ մնաց թղթի վրա, մեր(մեր բոլշեվիկների) անկուլտուրականության հետևանքով:

Այժմ ընկ. Ստեպանովի այս «դպրոցների համար ձեռնարկ»-ը լույս տեսնելուց հետո պետք է աշխատել,—և մենք կարող ենք,-այնպես անել, վոր յուրաքանչյուր գավառային (իսկ հետո և գավառակային) գրադարանում այդ «ձեռնարկից» մի քանի որինակ լինի, վոր Ռուսաստանի յուրաքանչյուր էլեկտրական կայանին կից (իսկ արդեն 800 եց ավելի կայաններ կան) վոչ միայն լինի այդ գիրքը, այլև անպայման կազմակերպվի հասարակական ժողովրդական ընթերցանություն էլեկտրականության, ՌՍՖԽՀ էլեկտրիֆիկացիայի և առհասարակ տեխնիկայի մասին. վորպեսզի յուրաքանչյուր դպրոցի յուրաքանչյուր ժողովրդական ուսուցիչ կարդա և յուրացնի այդ «Ձեռնարկը» (այդ գործին ոգնելու համար յուրաքանչյուր գավառում պետք է կազմակերպվի ինժեներների և ֆիզիկայի դասատուների խմբակ), և վոչ միայն ինքը կարդա, հասկանա ու յուրացնի, այլև կարողանա այդ պարզ ու հասկանալի ձևով պատմել ու բացատրել դպրոցի աշակերտներին և առհասարակ գյուղացիական յերիտասարդության:

Այս բանին հասնելը խոշոր աշխատանքների հետ է կապված: Մենք աղքատ և անկուլտուրական մարդ ենք: Ծավ չէ: Միայն թե սովորելու գիտակցություն լինի: Միայն թե սովորելու ցանկություն լինի: Պետք է միայն պարզ գիտակցությունն այն բանի, վոր այժմ բանվորին և գյուղացուն ուսումը պետք է վոչ թե նրա համար, վոր կալվածատերերին և կապիտալիստներին «ոգուտ» և շահույթ տան, այլ վորպեսզի բարելավեն իրենց կյանքը:

Իսկ այդ բոլորը մենք ունենք: Ցեմ այդ պատճառով մենք պետք է սովորենք և կսովորենք:

Լենին, Ի. Ի. ՍՏԵՊԱՆՈՎԻ (ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ) ԳՐՔԻ ՀԱՄԱՐ ԳՐՎԱԾ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ, 1922 թ. մայիս (Լենին, Ցերկերի ժողովածու, XVIII հ. II մաս, ռուս. I հրատ. ,17-18 եջ)

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ ՊՈԼԻՏԵԽՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման խընդիրը, մոտակա տարիների ընթացքում տեխնիկապես և տնտեսապես առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և առաջ անցնելու, յերկրորդ հնգամյակում «ամբողջ ժողովրդատնտեսության վերակառուցման ավարտումը և ժողովրդատնտեսության բոլոր ճյուղերի համար նորագույն տեխնիկական պատվանդան ստեղծելու» խնդիրն իր ամբողջ հասակով դնում է կադրերի խնդիրը, բանվոր դասակարգից նոր տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելու խնդիրը, վորը (ինտելիգենցիան) «նվիրված լինի սոցիալիզմի գործին և ընդունակ լինի տեխնիկապես գնահատելու մեր սոցիալիստական արդյունաբերությունը» (Ստալին): Միաժամանակ մեր ժողովրդատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, աշխատանքի սոցիալիստական մեթոդներն ավելի ու ավելի խոշոր հնարավորություններ են ստեղծում բանվոր դասակարգից այդպիսի կադրեր պատրաստելու համար: «Արդյունաբերության նախաձեռնողները, հարվածային բրիգադների ղեկավարները, աշխատանքային խանդավառության պրակտիկ ներշնչողները, շինարարության այս կամ այն բնագավառում աշխատանքը կազմակերպողները.—ահա բանվոր դասակարգի այն նոր խավը, վորը և բարձրագույն դպրոցը անցած ընկերների հետ միասին պետք է կազմի բանվոր դասակարգի ինտելիգենցիայի կորիզը, մեր արդյունաբերության հրամանատարական կազմի կորիզը» (Ստալին):

Պոլիտեխնիկական կրթության բնագավառում հանդես յեկող թեքումների, հատկապես դպրոցի մահացման տեսության յունից բղխող՝ տեսական պատրաստության, խորացրած գիտելիքների դերի թերագնահատման դեմ պայքարելու համար բացառիկ արժեք են ներկայացնում ընկ. Ստալինի ասույթները տեսության խոշոր նշանակության մասին:

*
* *

«Թեորիան բոլոր յերկրների բանվորական շարժման փորձն է՝ վերցրած իր ամբողջության: Թեորիան իհարկե անհրաժեշտ է պատճառով, յերբ չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այն պես, ինչպես պրակտիկան կույր է լինում, յեթե նա իր ճանապարհը չի լուսավորում հեղափոխական թեորիայով: Սակայն թեորիան կարող է բանվորական շարժման հսկայական ուժ դառնալ, յեթե նա զարգանում է՝ անքակտելիորեն կապված հեղափոխական պրակտիկայի հետ. վորովհետև նա, և միայն նա, կարող է հավատ ներշնչել շարժմանը, տալ կողմնորոշման ուժ և շրջապատող դեպքերի ներքին կապերի հասկացողություն, վորովհետև նա, և միայն նա, կարող է ոգնել պրակտիկային՝ հասկանալու ոչ միայն այն, թե ինչպես և դեպի ուր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլև դեպի ուր պետք է շարժվեն նրանք մոտ ապագայում: Ոչ այլ ոք, յեթե ոչ Լենինն եր, վոր բազմաթիվ անգամ կրկնած եր իր հայտնի դյուրթն այն մասին, թե «առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել նաև հեղափոխական շարժում»:

(Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 23—24)

Սակայն մեզ հիմք ունենք պարծենալու սոցիալիստական շինարարության պրակտիկ հաջողություններով, ապա չի կարելի նույնն ասել մեր տեսական աշխատանքի հաջողությունների մասին՝ եկոնոմիկայի բնագավառում ընդհանրապես և գյուղատնտեսությանն առաջարկում մասնավորապես։ Դեռ ավելին. պետք է ընդունել մեր տեսական միտքը յետ է մնում մեր գործնական հաջողություններից, մեր մեզնում մորոշ ետքում է և նկատվում գործնական հաջողությունների և տեսական մտքի զարգացման միջև։ Մինչդեռ անհրաժեշտ է, մեր տեսական աշխատանքը ոչ միայն հասնի գործնականի յետևից, այլև նրանից առաջ անցնի՝ դիմելով մեր պրակտիկ աշխատողներին՝ նրանց կողմից սոցիալիզմի համար մղվող պայքարում։

Ցեսս այստեղ յերկար չեմ խոսի թեորիայի նշանակության մասին. այդ ձեզ բավական լավ հայտնի յե։ Հայտնի յե, որ թեորիան, յեթե այդ իսկական թեորիա յե, կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, աշխատանքի վստահություն և մեր գործի հաղթանակի հավատք է ներշնչում պրակտիկ աշխատողներին։ Այս ամենը մեր սոցիալիստական շինարարության համար խոշորագույն նշանակություն ունի և չի կարող այդպիսի նշանակություն չունենալ։

(Ի. Ստալին, ԽՍՀՄ. ազգարարային քաղաքականության հարցերի շուրջը (ճառ մարքսիստ—ագրարագետների I կոնֆերենցիայում, 27 XII 1929 թ.)

Ծանր արդյունաբերության կառուցման խնդիրը դեմ է առնում ոչ միայն կուտակման պրոբլեմին։ Նա դեմ է առնում նաև կադրերի պրոբլեմին, այն է՝

ա) տասնյակ-հազարավոր խորհրդայնորեն տրաժարված տեխնիկներին և մասնագետներին սոցիալիստական շինարարությանը հաղորդակից անելու և

բ) Բանվոր դասակարգի շարքերից նոր կարմիր տեխնիկներ և կարմիր մասնագետներ ստեղծելու պրոբլեմին։ Յեթե կուտակման պրոբլեմը հիմնականում կարելի յե լուծված համարել, ապա կադրերի պրոբլեմը դեռևս կարոտ է իր լուծման։ Իսկ կադրերի պրոբլեմը ներկայումս՝ արդյունաբերության տեխնիկական վերակառուցման պայմաններում, սոցիալիստական շինարարության վճռական պրոբլեմն է։

(Ի. Ստալին, Մեծ բեկման տարին. Լենինիզմի հարցերը, էջ 620)

«... Բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային։ Ժամանակն է, որ բոլշևիկներն իրենք մասնագետներ դառնան։ Վերակառուցման շրջանում տեխնիկան վճռում է ամեն ինչ։ Յեվ այն տնտեսավարը, որը չի ցանկանում տեխնիկան ուսումնասիրել, չի ցանկանում տեխնիկային տիրապետել, նա ծաղր է, այլ ոչ թե տնտեսավար։

Ասում են, որ տեխնիկային տիրապետելը դժվար գործ է։ Այդ ճիշտ չէ։ Չկան այնպիսի ամրոցներ, որ բոլշևիկները չկարողանան գրավել։ Մենք մի շարք դժվարագույն խնդիրներ լուծեցինք։ Մենք տապալեցինք կապիտալիզմը։ Մենք վերցրինք իշխանություն։ Մենք կառուցեցինք խոշորագույն սոցիալիստական ինդուստրիա։

(И. Сталин, о задачах хозяйственников, стр. 14—15, 9 изд. 4 февр. 1931 г.)

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԴՐԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Անցնինք այժմ մեր արդյունաբերության տեխնիկական ռեկոնստրուկցիայի նոր կադրերով ապահովելու խնդրին։

Խոսքն արդյունաբերության զծով մեր ունեցած զժվարությունների մասին է, որոնք հայտնաբերվեցին Շախտիի գործի կապակցությամբ։

Ինչ է Շախտիի գործի նշանակությունն արդյունաբերության բարելավման տեսակետից։ Շախտիի գործի նշանակությունն ու խմբատն այն է, որ մենք գրեթե անզեն դուրս եկանք և միանգամայն հետամնաց, խայտառակորեն հետամնաց մեր արդյունաբերությունը բանվոր դասակարգի գործին նվիրված մասնագետների զեթ մորոշ նվազագույն քանակությամբ ապահովելու տեսակետից։ Շախտիի գործից բղխող դասն այն է մեզ, որ անհրաժեշտ է ուժեղացնել և արագացնել բանվոր դասակարգին պատկանող մարդկանցից դուրս եկած, սոցիալիզմի գործին նվիրված և տեխնիկապես մեր սոցիալիստական արդյունաբերության ղեկավարելու ընդունակ, նոր տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման տեմպը։...

... Շախտիի գործի դասերը չեն կարող ապարդյուն անցնել մեր կուսակցության համար։ Ցնս կարծում եմ, որ այս դասերը կնպաստեն մեզ ամենայն արագությամբ դնելու տեխնիկական նոր ինտելիգենցիա ստեղծելու խնդիրը, որն ընդունակ կլինի ապահովելու մեր սոցիալիստական արդյունաբերությանը։

(Ի. Ստալին. Համ. կ(բ)կենտկոմի հունիսյան պլենումի արդյունքների մասին. «Լենինիզմի հարցերը», եջ 489–492

«... Մենք իշխանության հասանք մի յերկրում, որի տեխնիկան սարսափելի հետամնաց է։ Այս կամ այն չափով նոր տեխնիկայի վրա հիմնված արդյունաբերական ամենամեծ խոշոր միավորների կողքին մենք հարյուրավոր և հազարավոր ֆաբրիկաներ և գործարաններ ունենք, որոնց տեխնիկան ներկայիս նվաճումների տեսակետից վոչ մի քննադատության դիմանալ չի կարող։ Մինչդեռ մեր շուրջը կան մի շարք կապիտալիստական յերկրներ, որոնք արդյունաբերական շատ ավելի զարգացած և կատարելագործված տեխնիկա ունեն, քան մեր յերկիրը։ Նայեցեք կապիտալիստական յերկրներին, և դուք կտեսնեք, որ տեխնիկան այնտեղ վոչ միայն զնում, այլ ուղղակի վազում է առաջ, յետ թողնելով արդյունաբերական տեխնիկայի հետամնաց ձևերը։ Ցնս անա դուրս է գալիս, որ մի կողմից՝ մեր յերկրում մենք ունենք աշխարհիս ամենաառաջավոր իշխանությունը՝ Խորհրդային իշխանությունն, իսկ մյուս կողմից մենք ունենք արդյունաբերության չափազանց հետամնաց տեխնիկա, որը մեզնում սոցիալիզմի և խորհրդային իշխանության բազան է։ Հարկավոր է արդյոք, թե կարելի յե հասնել սոցիալիզմի վերջնական հաղթանակին մյա հակասության առկայության պայմաններում։ Ինչ պետք է անել հիշյալ հակասությունը լիկվիդացիայի յենթարկելու համար։ Դրա համար պետք է ձգտել այն բանին, որ կարողանանք հասնել և անցնել կապիտալիստական զարգացած յերկրների առաջավոր տեխնիկայից։ Կապիտալիստական առաջավոր յերկրներին մենք հասել և գերազանցել ենք քաղաքական նոր կարգ՝ խորհրդային իշխա-

նություն հաստատելու իմաստով։ Այս լավ է։ Բայց այս քիչ է։ Սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար դեռևս անհրաժեշտ է հասնել այդ յերկրներին և պերազանցել նրանց նաև տեխնիկական—տնտեսական տեսակետից։ Կամ մենք այդ նպատակին կհասնենք, կամ մեզ կճզվեն։ Այս ճիշտ է ոչ միայն սոցիալիզմի կառուցման տեսակետից։ Այս ճիշտ է նաև կապիտալիստական շրջապատման պայմաններում՝ մեր յերկրի անկախության պաշտպանության տեսակետից։ Անհնար է պաշտպանել մեր յերկրի անկախությունը՝ արդյունաբերական բավարար բազա չունենալով պաշտպանության համար։ Անհնար է ստեղծել այդպիսի արդյունաբերական բազա՝ չունենալով բաքձր արդյունաբերական տեխնիկա։ Ահա թե ինչու համար է անհրաժեշտ և ահա թե ինչն է թելադրում մեզ ինդուստրիայի դարդացման արագ տեմպը։

(Ի. Ստալին, Յերկրի ինդուստր. և ալ Թեքման մասին, Լենինիզմի հարցերը, եջ 510)

«Կոմունիստական հասարակության ընդհանուր բնութագիրը տվել են Մարքսը, Ենգելսը և Լենինն իրենց աշխատություններում մեջ Յեթե հակիրճ ձևով տալու լինենք կոմունիստական հասարակության անատոմիան, ապա այդ մի այնպիսի հասարակություն է լինելու, վորտեղ՝ ա) չի լինի արտադրության գործիքների ու միջոցների սեփականություն, այլ կլինի հասարակական, կոլեկտիվ սեփականություն. բ) վորտեղ չի լինի պատակարգը և պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի ու գյուղատնտեսության աշխատավորներ՝ տնտեսապես

կառավարող, վորպես աշխատավորների պատասխանատուներ. գ) վորտեղ պլանով կազմակերպված ժողովրդական տնտեսությունը կհիմնվի բարձրագույն տեխնիկայի վրա՝ ինչպես ինդուստրիայի, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում. դ) վորտեղ հակասություններ չեն լինի քաղաքի ու գյուղի, ինդուստրիայի ու գյուղատնտեսության միջև. ե) վորտեղ մերերքները կբաշխվեն ֆրանսական հին կոմունիստների սկզբունքի հանձնատ՝ «յուրաքանչյուրից՝ ըստ հնարավորությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջների». զ) վորտեղ գիտությունը և արվեստը կդանվեն այնպիսի պայմաններում, վորոնք միանգամայն բավարար կլինեն նրանց լիովին ծաղկելու համար. է) վորտեղ մի կտոր հացի հոգսից և «աշխարհի հզորներին» հարմարվելու անհրաժեշտությունից ազատ անհատը կդառնա իրապես ազատ։ Ձեվ այլն և այլն։

(Ի. Ստալին, «Զրույց ամերիկ. բանվ. առաջին պատգամավորության հետ», «Լենինիզմի հարցերը» եջ 407)

«... Ահա ինչպես սուր կերպով է դնում հարցը Լենինը՝ կամ էլեկտրոֆիկացիա, այսինքն՝ «յերկրի տնտեսության, այդ թվում նաև հողագործության փոխադրումը ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական նոր բազայի վրա», կամ վերադարձ դեպի կապիտալիզմը։

Ահա թե ինչպես և հասկանում Լենինը «գյուղատնտեսության հետ ճիշտ փոխհարաբերությունների» հարցը։ Բանն այն չէ, վոր մենք շոյենք գյուղացուն և այդ հաշվենք նրա հետ ճիշտ փոխհարաբերությունների ապահովում, վորովհետև շոյումը մեզ հեռու չի տա-

նի, այլ այն, որ ոգնենք գյուղացուն փոխադրելու իր տնտեսությունը «տեխնիկական նոր բազայի, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական նոր բազայի վրա», որովհետև այդ և գյուղացիության չքավորությունից փրկելու հիմնական ուղին։

Իսկ անկարելի չի յերկրի տնտեսությունը փոխադրել տեխնիկական նոր բազայի վրա՝ առանց մեր ինդուստրիայի և ամենից առաջ արտադրության միջոցների արտադրման զարգացման արագ տեմպի»։

(Ի. Ստալին, Յերկրի ինդուստրացման և ալ թեքման մասին, «Լենինիզմի հարցերը», էջ 317)

Այժմ անհրաժեշտ է, որ մենք ապահովինք մեզ արդյունաբերության ինժեներա—տեխնիկական հրամանատարական՝ ավելի քան յուռապատիկ ու հնգապատիկ ուժերով, յերթե մենք իրոք մտադիր ենք իրականացնելու ՍՍՀՄ—ի սոցիալիստական ինդուստրացման ծրագիրը։

Սակայն մեզ պետք են վոչ ամեն տեսակի հրամանատարական ինժեներա—տեխնիկական ուժեր։ Մեզ հարկավոր են հրամանատարական, ինժեներա—տեխնիկական այնպիսի ուժեր, որոնք ընդունակ լինեն հասկանալու մեր յերկրի բանվոր դասակարգի քաղաքականությունը, ընդունակ լինեն յուրացնելու այդ քաղաքականությունը և պատրաստ լինեն իրականացնելու այդ։ Իսկ ինչ է նշանակում այս։ Այս նշանակում է, որ մեր յերկիրը թևակոխել է զարգացման այն փուլը, յերբ բանվոր դասակարգը պետք է ըստեղծի սեփական արտադրական—տեխնիկական ինտելիգենցիա, որն ընդունակ լինի պաշտպանելու

նրա շահերն արտադրության մեջ՝ վորպես տիրապետող դասակարգի շահերը։

Վոչ մի տիրապետող դասակարգ չի բավարարվի առանց իր սեփական ինտելիգենցիայի, վոչ մի հիմք չկա տարակուսելու, որ ՍՍՀՄ—ն բանվոր դասակարգը նույնպես չի կարող բավարարվել առանց իր սեփական արտադրական—տեխնիկական ինտելիգենցիայի։

Խորհրդային իշխանությունը հաշվի առավ այդ հանգամանքը և բանվոր դասակարգից դուրս յեկած մարդկանց առաջ բացեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Դուք դիտեք, որ տասնյակ հազարավոր բանվոր ու գյուղացի յերիտասարդներ սովորում են այժմ բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Յերթե առաջ կապիտալիզմի ժամանակ, բարձրագույն ուսումնական հաստատություններ Բարիևի զավակների մենաշնորհն էին, ապա այժմ խորհրդային կարգերում, բանվոր և գյուղացի յերիտասարդներն այնտեղ կազմում են տիրապետող ուժը։ Տարակույս չկա, որ շուտով մենք ուսումնական հաստատություններից կստանանք մեր արդյունաբերության համար հազարավոր նոր հրամանատարներ՝ հազարավոր տեխնիկներ ու ինժեներներ։ Սակայն այդ գործի մի կողմն է միայն։ Գործի մյուս կողմն այն է, որ բանվոր դասակարգի արտադրական—տեխնիկական ինտելիգենցիան պիտի ձևակերպվի վոչ միայն բարձրագույն դպրոցն անցած մարդկանցից, այլ պիտի հավաքագրվի նաև մեր ձեռնարկությունների գործնական աշխատողներից, որոնք

յալ բանվորներից, գործարանում, հանքահորում բանվոր դասակարգի ունեցած կուլտուրական ուժերից։ Մրցութեան նախաձեռնողները, հարվածային բրիգադների ղեկավարները, աշխատանքային խանդավառութեան պրակտիկ ներշնչողները, շինարարութեան այս կամ այն բնագավառում աշխատանք կազմակերպողները.— Ահա բանվոր դասակարգի այն նոր խավը, որը բարձրագույն դպրոցն անցած ընկերների հետ միասին պետք է կազմի բանվոր դասակարգի ինտելիգենցիայի կորիզը, մեր արդյունաբերութեան հրամայական կազմի կորիզը։ Խնդիրն այն է, որ մի կողմ չպետք է հրել նախաձեռնութեան վոգով համոզված այդ ընկերներին, ավելի համարձակորեն առաջ քաշել նրանց հրամանատարական պաշտոնների, հնարավորութեյուն տալ նրանց հայտնաբերելու իրենց կազմակերպչական ընդունակութեյունները, հնարավորութեյուն տալ նրանց լրացնելու իրենց գիտելիքները և համապատասխան պայմաններ ստեղծել նրանց հաջող՝ առանց վող խնայելու։

(Ի. Ստալին, Նոր պայմաններ—նոտեսական շինարարութեյան նոր խնդիրներ)։

Առաջին հնգամյակի շրջանում մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարութեյան ենտուզիազմը, պաֆոսը և հասանք վճռական հաջողութեյունների։ Այդ շատ լավ է։ Բայց այդ այժմ բավական չէ։ Այժմ մենք այդ գործը պետք է լրացնենք նոր գործարաններին, նոր տեխնիկայի յուրացման ենտուզիազմով, պաֆոսով, աշխատանքի արտադրողականութեյան լուրջ բարձրացմամբ, ինքնաթեժքի լուրջ կրճատմամբ։ Այժմ գլխավորն այդ է։

(Ի. Ստալին, I հնգամյակի հանրագումարների մասին)

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

ՊՈԼԻՏԵԽՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

(Գեագիտխորհի I նստաշրջանին կրուպսկայայի արած զեկուցման թեզիսները, 1929 թ., մայիս)

1. Մեր յերկիրը մինչև հիմա արդյունաբերական տեսակետից ամենահետամնաց յերկրներից մեկն է և չի դեր Այժմ նա գնում է ինդուստրացման ուղիով, և աշխատանքի հեռանկաց, դարերով գործադրվող ձեվերը մեռնում, յետ են մղվում դիտութեյան վերջին խոսքի հիման վրա կառուցվող ժամանակակից խոշոր արդյունաբերութեյան կողմից։ Կատարվում է վողջ ժողովրդական անտեսութեյան ռեկոնստրուկցիան։

2. Բայց և անկախ մեր հետամնացութեյուններից, ժամանակակից խոշոր արդյունաբերութեյունը,— վորի զարգացման ընթացքն է վերցրել մեր յերկիրը,— չի ներկայացնում մի բացարձակ կայուն (ստաբիլ) վիճակ։ Նրա համար,—ինչպես իր ժամանակ նշված է ընկ. Մարքսի կողմից,—բնորոշ են արտադրութեյան պրոցեսների մշտական փոփոխութեյունները, այսպես ասած՝ արտադրութեյան պերմանենտ վերակառուցումը։

Այս պատճառով էլ ժամանակակից բանվորից պահանջվում է արտադրութեյան շարունակ փոփոխվող պայմաններին հարմարվելու, արտադրութեյան նոր ճե-

թողներին տիրապետելու կարողությունը։ Իսկ մեր յերկրում, վորտեղ հնարավոր չափով շուտ սոցիալիստական շինարարության համար պետք է ստեղծել արտադրական բազա, վորտեղ ռեկոնստրուկցիայի գործում այնպիսի մեծ գեր է խաղում բնակչության կոոպերացումը, վորտեղ,—ինչպես շարունակ ընդգծում եր Լենինը,—յերկրի վողջ տնտեսության մեջ չի կարելի հեղաշրջում առաջացնել առանց իրենց՝ մասսաների մասնակցության,—մասսաների պոլիտեխնիկական մտահորիզոնը հսկայական դեր է խաղում։

3. Վողջ ժողովրդական տնտեսության ռեկոնստրուկցիան մասսաների, սրանց թվում և մանկական մասսաների մեջ հետաքրքրություն և զարթնցնում դեպի տեխնիկան, վորը բարենպաստ նախադրյալներ է ստեղծում պոլիտեխնիկական դաստիարակությունը կիրառելու համար, դաստիարակություն, վորը խթանում է այդ հետաքրքրությունը և նրա համար գիտական բազա ստեղծում։

4. Աննհրաժեշտ է, վոր մեր հիմնարկները՝ սկսած մանկապարտեզից, չխեղդեն այդ հետաքրքրությունը, այլ ամեն կերպ զարգացնեն այն՝ համապատասխան փաստեր հաջորդելու, այդ փաստերը գիտականորեն իմաստավորելու, ընթերցանության համապատասխան գրքեր ստեղծելու, եքսկուրսիաներ, դիտողություններ կազմակերպելու, աշխատանքի պրոցեսներն ուսումնասիրելու միջոցով և այլն։ Պետք է աշակերտներին դրավել ժամանակակից տեխնիկայի ռոմանտիկայով։

5. Ժամանակակից տեխնիկային գործնականորեն ծանոթանալու համար պետք է ոգտագործել յուրաքանչյուր էլեկտրոկայան, յուրաքանչյուր յերկաթուղային արհեստանոց, յուրաքանչյուր տրակտոր, յուրաքանչյուր կարի մեքենա, յուրաքանչյուր գյուղատնտեսական մեքենա, յուրաքանչյուր արհեստանոց, յուրաքանչյուր ֆաբրիկա, գործարան։

6. Վերն և պոլիտեխնիկական կրթության բովանդակությունը։ Սխալ կլիներ ենթադրել, վոր այդ բովանդակությունը հանդում է ուսանողների վորոշ գումար ձեռք բերելուն (ինչպես կարծում է Գաստևը), կամ բազմարհեստության,—ինչպես ենթադրում են վոմանք,— կամ լոկ տեխնիկայի ժամանակակից, բարձրագույն ձեվերն ուսումնասիրելուն (ինչպես կարծում է Գանկևիչը)։ Պոլիտեխնիզմը մի ամբողջ սիստեմ է, վորի հիմքը կազմում է տեխնիկայի զանազան ձեվերի ուսումնասիրությունը, վերցրած իր զարգացման և իր բոլոր միջանորդությունների (опосредствованиях) մեջ։ Սրա մեջ մտնում է և՛ գրնական տեխնոլոգիայի,— ինչպես անվանում եր Մարքսը կենդանի բնության,— և՛ նյութերի տեխնոլոգիայի ուսումնասիրությունը, և՛ արտադրության գործիքների, նրանց մեխանիզմների ուսումնասիրությունը, շարժիչ ուժերի՝ էներգետիկայի ուսումնասիրությունը։ Սրա մեջ մտնում է և տնտեսական հարաբերությունների աշխարհագրական հիմունքի ուսումնասիրությունը, (հատկապես) ստացման ու վերաշխարհման ձեվերի ազդեցությունն աշխատանքի հասարակական ձեվերի վրա և վերջիններիս ազդեցությունը վողջ հասարակական ձեվի վրա։

7. Պոլիտեխնիզմը դաստիարակման [illegible] առանձին առարկա չէ։ Նա իրենով պետք է ստորի բոլոր դիսցիպլիններին, անդրադառնա և՛ ֆիզիկայի, և՛ քի

միայն, և՛ բնագիտության, և՛ հասարակագիտության նյութերի ընտրության վրա։ Անհրաժեշտ է այդ դիսցիպլինների փոխադարձ կապը, ինչպես և նրանց կապը — պրակտիկ գործունեության և հատկապես նրանց կապն աշխատանքի ուսուցման հետ։ Միայն այդպիսի կապը կարող է աշխատանքի դաստիարակությանը հաղորդել պոլիտեխնիկ բնույթ։

8. Ինքն ըստ ինքյան՝ պոլիտեխնիկորեն կառուցված ծրագիրն ավելի քան վորևե այլ ծրագիր աշակերտներից պահանջում է դիտելու, իրենց դիտողությունները փորձերի, պրակտիկայի, մասնավորապես աշխատանքի պրակտիկայի միջոցով խորացնելու և ստուգելու կարողության, նա պահանջում է կատարած դիտողությունները ֆիկսացիայի ենթարկելու և դրանցից յեզրակացություններ անելու կարողություն։

9. Պոլիտեխնիկական դպրոցում աշխատանքի ուսուցումն աշակերտներին մի կողմից՝ պետք է տա ընդհանուր աշխատանքի ունակություններ (ինչպես, որինակ՝ կարողանալ իր աշխատանքի առաջ դնել վորոշակի նպատակներ, ծրագրել իր աշխատանքը, հաշվարկումներ կատարել, գծագրեր կարդալ, աշխատանքը նպատակահարմար ձևով իրենց մեջ բաշխել, կոլեկտիվորեն աշխատել, կարողանալ տնտեսապես գործածրել նյութերը, գործիքների հետ վարվել կարողանալ, աշխատանքի մեջ ձգտել վորոշ, տվյալ տարիքի համար մատչելի, խնամքոտության, ճշգրտության և այլն), մյուս կողմից՝ իմաստավորել աշխատանքի պրոցեսները տեխնիկայի, աշխատանքի կազմակերպության, նրանց հասարակական կարևորության (ի հարկե

դարձյալ աշակերտների տարիքներին ու կինսական փորձին համապատասխան տեսակետից)։

10. Աշակերտին աշխատանքի ունակություններով զինելն ոգնում է խորացնելու դպրոցի հասարակական ոգտակար աշխատանքի դերվածքը, վոր հսկայական նշանակություն ունի կոլեկտիվ աշխատանքի ունակություններ դաստիարակելու, յերեխաների մեջ դեպի իրենց աշխատանքը հասարակական մոտեցում դաստիարակելու գործում։

11. Նկարչական և գծագրական դասարանները, լաբորատորիաները, արհեստանոցները և փորձնական հողամասերը հանդիսանում են վորպես անհրաժեշտ դպրոցական սարքավորում։ Սակայն դպրոցը պետք է ձգտի յերեխաների աշխատանքը կազմակերպելու բուն արտադրության մեջ։

12. Ինքն ըստ ինքյան պոլիտեխնիկական դպրոցն իր առանձին աստիճաններում տարբ՛ր տեսք ունի։

Առաջին աստիճանում աշխատանքային դասախարակությունն անխուսափելիորեն ընդհանուր բնույթ է կրում։ Բայց 7-ամյակում վորպես յելակետ վերցվում է արդեն արտադրության մի վորևե վորոշ ճյուղ (ինչպես ասենք, որինակ, այդ տեսնում ենք գյուղյերիտ դպրոցներում, գործարանային 7-ամյակներում)։ Սակայն 7-ամյակում մասնագիտացում դեռ չկա։ Նրա նպատակն է՝ աշակերտի համար իմաստավորել արտադրության հիմունքները, աշակերտին ոգնել հասկանալու արտադրության տվյալ ճյուղի տեխնիկական և տնտեսական փոխհարաբերությունները այլ ճյուղերի հետ, աշակերտին զինել տեսությունը պրակտիկայի հետ կապելու կարողությամբ։ Յերկրորդ

կոնցենտրում (սրանք այժմ արդեն վեր են ածված տեխնիկումների, բազմոցները) արդեն տրվում է միայն մասնագիտացում, սակայն այդ մասնագիտացումը տրվում է այն ձևով, որ այդ մասնագիտացումը տալով միայն որոշ պրոֆեսիայի համար անհրաժեշտ կարողություններ, գիտելիքներ՝ միաժամանակ ընդարձակի աշակերտների պոլիտեխնիկական մտահորիզոնը։

13. Պոլիտեխնիկական դպրոցը տարբերվում է պրոֆեսիոնալ դպրոցից այն բանով, որ առաջինում ճանաչության կենտրոն ընկած է աշխատանքային պրոցեսները գիտակցելու, իմաստավորելու մեջ, որ նա զարգացնում է տեսությունն ու պրակտիկան միասին կապակցելու, որոշ երևույթների փոխադարձ կապակցությունն ըմբռնելու կարողություն,— մինչդեռ պրոֆեսիոնալ դպրոցում ճանաչության կենտրոնը փոխադրվում է աշակերտներին աշխատանքի ունակություններով զինելու վրա։

14. Սակայն ժամանակակից խոշոր արդյունաբերության բնույթն այնպես է, որ նա այդպիսի տիպի մասնագետների պահանջ է առաջադրում, որոնք կարողանային հարմարվել արտադրության շարունակ փոփոխվող պայմաններին, այդ պատճառով էլ ավելի ու ավելի է սկսում ունակությունների ուսուցանը պոլիտեխնիկական բնույթ տալ նաև պրոֆեսիոնալ դպրոցներում (գոնե խոշոր արտադրություն ընդգրկված ճյուղերում)։

15. Բայց ճիշտ կերպով կազմակերպված պոլիտեխնիկական դաստիարակությունը պատրաստում է բազմակողմանի զարգացած այնպիսի աշխատող, որ պետք

չէ կապիտալիստին [1]։ Ահա թե ինչու կապիտալիզմի պայմաններում պոլիտեխնիկական դպրոցը չի կարող լիովին զարգանալ ու ծավալվել [2]։

16. Մեր յերկրում պոլիտեխնիկական դպրոցի զարգացմանը խանգարում է արդյունաբերության թույլ զարգացումը։ Սակայն յուրաքանչյուր տարվա հետ այդ արգելքը կսկսի նվազել, և խորհրդային դպրոցը կսկսի ավելի ու ավելի պոլիտեխնիկական տեսք ընդունել [3]։

---

[1]) Այդպիսի աշխատողը վոչ միայն պետք չէ, այլև չափազանց վտանգավոր է կապիտալիստի համար։ (Կազմողները)

[2]) Կապիտալիզմի պայմաններում առհասարակ անհնար է պոլիտեխնիկական կրթության կազմակերպումը։ (Կազմողները)

[3]) Այժմ մեզ մոտ արդեն գոյություն ունի դպրոցի պոլիտեխնիզացիայի բոլոր հիմնական նախագրյալները։ (Կազմողները)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

«Ազգային գրադարան»
NL0231402

49.106